

# ԱՒԵՏԱԿԵՐ

## ՇԱԲԱԹԱԿԱՆ ԿԱՆԳԷՍ

ՀԱՏՈՐ ԿԷ.

28

ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԻՒ 48

1914

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՂՕԹՔ

ՍՈՒՐԲ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՎԵՐ. ՏՈՔԹ. ՃՈՆ ՀԸՆԹԸՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ԴԵՌԱՀԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՌԻՑԻՆ ԲԵՐՆԷՆ

ՏԻՊԱՐ ԿԵԱՆՔԸ

ՓՐՈՅ. ՅՈՎՀ. ՊՈՒՃԻԳԱՆԵԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ՆԱՄԱԿԱՆԻ

ՄԱՆԻՇԱԿ

ԱՐԴԱՐԱՑՈՒՄ

ՓԱԽՏՈՍ ԲԻԶԱՆԴԱՅԻ

ՓՐՈՅ. ՏՈՔԹ. ՊԱԶԻԼ ԽԱՆ

ԿԵԼԻԿԻՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Յ. Վ. ՆԱՃԱՐԵԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ՕՐԷՆՔԻ

ՏԵՍԱԿԷՏԷ

Բ. Պ.

ՄԱՐԴԱՂԻ

Մ. Մ. ԳԼՈՐԳԵՆՅ

ԼՈՒՐԵՐ

Հրատարակիչ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՊԱՅՊԸԼ ՀԱՌԻՍ

Կ. ՊՈԼԻՍ

مدار هفته لقی غزته — در سعادتده با بیل هاوسده — مدیر مسئولی صموئیل ق. هاروتیونیان

# ԱԻԵՏԱԲԵՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ ԸՆՏԱՆԵԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ: — Վեր. Տֆ. Ֆ. Ու. Մեֆալըմ, Վեր. Յ. Ա. ձեհիգեան, Վեր. Ա. Պ. Շամաւոնի  
Աշխատակցութեամբ Հայ և Օտարագգի ծանօթ գրողներու

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ. — Թուրքիոյ համար 40 դահեկան, Ամերիկայի համար 2 տար, Ա.Ֆ. համար 8 Ելլին, ուրի՛ք երկիրներու համար 10 Գրանց: Չեռէ կը ծախուի հասը 40 փարս  
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն գրութիւն պէտք է ուղղուի Վեր. Ֆ. Ու. Մեֆալըմի հասցէին, Պայպըլ-Հաուս, Կ.  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ, ԵՄԵՆՈՒՅՄԱՆ և Թերթին վարչութեան վերաբերեալ ամէն խնդրի համար պէտք է դիմել  
Հրատարակիչ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆԻ, Պայպըլ-Հաուս, Կոստանդնուպոլիս:

**AVEDAPER AN ARMENIAN WEEKLY REVIEW**  
EDITORS. — Rev. F. W. Macallum D.D., Rev. H. A. Djedjizian, Rev. A. B. Schmajonian.  
ANNUAL SUBSCRIPTION: Turkey Pts. 40: U. S. America \$ 2: England 8 Shillings: Other countries Prcs. 10: — Single copies 40

**AVEDAPER FOR CHILDREN, AN ARMENIAN ILLUSTRATED MONTHLY FOR BOYS AND GIRLS**  
For Subscriptions, Advertisements etc. apply to the Publisher H. MATTEOSIAN, Bible House, Constantinople

# ԱԻԵՏԱԲԵՐ ՄԱՆԿԱՆՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐ

(Նմոյշ մը ձրի կը ղրկուի փափաքողներուն): Տարեկան Բաժնորդագին Թուրքիոյ համար 8 Ղրուշ, և ուրի՛չ երկիրներու համար 10 Ղրուշ: Ձեռքէ կը ծախուի հատը 30 Փարայի:

Գաւառներէ եւ արտասահմանէ դրամ ղրկելու ամէնէն ղիւրին եւ ապահով միջոցն Մանդատը (Mandat de poste): Ձէքեր եւ փոխգիրներ պէտք է Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆԻ հրատարակչին վճարելի ըլլան:

CUNARD LINE



# ՔԻԻՆԱՐՏ ԼԱՅՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀՍԿԱՅ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԸՆԴ ՄԷՋ ԲԱԹՐԱՍԻ ԵՒ ՆԻԻ-ԵՕՐՔԻ

ՔԻԻՆԱՐՏ ԼԱՅՆ ընկերութեան բոլոր նաւերը, նոր կարգադրութեան մը համաձայն, կանոնաւորաբար 1 Յունիս 1914 Էն սկսեալ պիտի հանդիպին ԲԱԹՐԱՍ և անկէ ուղղակի ՆԻԻ-ԵՕՐՔ, ընդհանուր վաճառքով և համարողներով:

ՔԻԻՆԱՐՏ, անգլիական հսկայ ընկերութիւնը այս գովելի ձեռնարկով չաղծականութեան, մասնաւորապէս համարողներու ղէպի Ամերիկայ արագ, հանգիստ եւ ապահով երթեկոսութեան խիստ կարեւոր խնդիրը միանգամ ընդմիջապահոված կ'ըլլայ:

Ա. և Բ. կարգի համարողներու համար մասնաւոր արագընձաց սպասարկութիւն, ընդմէջ ՊՈԼՍՈՑ, ԼԻՎԸՐՔՐՈՒԼԻ, ՆԱՐՈՒԼԻ, ԲՐԻՏՏՈՒԼԻ և ԲԱԹՐԱՍ, Պոլսէն ղէպի Ամերիկայ ուղղակի տոմսակ գնելու եւ ապրանք բեռնաւորելու համար ղիմեցնելու վԱԼԹԷՐ ՍԻԵՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՂԱԼԱԹԻՑ ԲԱԹՐԱՍԻ ՎՐԱՑ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՄԷՐՔԷՋ ԻՍՏԱՆ

Պոլսոյ կողմը ՔԻԻՆԱՐՏի տոմսակ գնելու համար ղիմել Տար 2. Փափաղեանի, Պայպըլ-Հաուս

# ՄԻՆԵՏԱԲԵՐ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՆՏԱՆԵԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՈՐ ԿԷ.

4. ՊՈԼԻՍ, ՆՈՅՄԲԵՐ 28, 1914

ԹԻԻ 48

## ՊՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

### ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Երաժշտութիւն

Կատարազմը կը շարունակուի բուն կերպով մէջ կողմ: Հրետանիի երաժշտութիւնը հնչել Ա. Իրիկէի մէջ ալ: Գաղութներու ընդհարումներէն եւ թրանսպալի ապստամբներէն յետոյ աւելի լուրջ կոիւններ են, կ'ըսուի, Սուէդի շրջանին մէջ: Եւ Ասիա եւ Ա. Իրիկէ թնդանօթի ձայնով Գնան ամէն առաւօտ եւ նոյն ձայնով կը լին ամէն իրիկուն:

Գրծօն անգարձութիւն

Ինչ ալ ըլլայ այս գործօն անգարձութեան պատճառը, ակներեւ կը թուի թէ յաղթանակը այն կողմին պիտի վիճակի որ ամէնէն աւելի երկար պիտի առկայ եւ կամ ամէնէն մեծ թիւով բանակ մը պիտի կրնայ ճակատակցել վերջի վերջոյ: Յարզ տեղի ունեցած զէպքերէն սակայն կարելի չէ գատել թէ ո՞ր կողմն է որ այսպէս վերջին վայրկեանին պիտի յաջողի հրապարակ հանել այդ դերազանցութիւնը: Եթէ թարմ ու նոր ուժեր միայն պիտի կրնան նժարը դարձնել մէկ կամ միւս կողմին ինպատար, անգիր ծայր կենսական խնդիր մը կը դրոնայ թէ

ուին: Մտա երեք ամիսէ ի վեր Ֆրանսայի եւ Պելճիկայի մէջ թշնամի բանակները գամուած մնացած կը թուին իրենց գիրքերուն վրայ, բայց այս գիրքերը այսպէս պաշտպանելու համար աւելի շատ կեանքեր զոհուեցան անշուշտ քան Տրոյաքայի տասնամեայ պատերազմին ամբողջ տեւողութեանը: Կ'ամ այն է որ երկու ընդդիմամտրա ուժերը ամէն կերպով կը հաւատարակչան գիրար եւ հետեւորար նժարը չհակիր մէկ կամ միւս կողմ, եւ կ'ամ այն որ արդի պատերազմներուն մէջ այնքան մեծ դեր կը կատարեն անթեղ հեռագրի, հեռաձայնի եւ սաւառնակի նման մեքենական գործիքներ որ պարզապէս անիւրդի է ռազմական հնարքներով եւ զազանի շարժումներով յանկարծակիի բերել թշնամին կամ հարուածել զայն սրեւէ տկար կէտի մէջ:

Գործօն անգարձութիւն

Ինչ ալ ըլլայ այս գործօն անգարձութեան պատճառը, ակներեւ կը թուի թէ յաղթանակը այն կողմին պիտի վիճակի որ ամէնէն աւելի երկար պիտի առկայ եւ կամ ամէնէն մեծ թիւով բանակ մը պիտի կրնայ ճակատակցել վերջի վերջոյ: Յարզ տեղի ունեցած զէպքերէն սակայն կարելի չէ գատել թէ ո՞ր կողմն է որ այսպէս վերջին վայրկեանին պիտի յաջողի հրապարակ հանել այդ դերազանցութիւնը: Եթէ թարմ ու նոր ուժեր միայն պիտի կրնան նժարը դարձնել մէկ կամ միւս կողմին ինպատար, անգիր ծայր կենսական խնդիր մը կը դրոնայ թէ

արդեօք ի՞նչ դեր պիտի կատարեն այն երկիրները որոնք ցարդ չէզոք մնացին եւ թէ ո՛ր կողմին պիտի օժանդակեն , եթէ վերջապէս յօժարին կամ բռնադատուին խզել իրենց չէզոքութիւնը : Ամէն աչք կը դառնայ դարձեալ դէպի Պուքրէշ եւ Սոփիա , դէպ ի Աթէնք եւ Հոովմ :

**Քաղաքեալ հաւիւնիւր**

Պալքանեան չէզոք տէրութիւններուն իրարու հանդէպ ունեցած կասկածները եւ հաշիւները այնքան բարդ եւ խառնակ են որ կարելի չէ կարծես ենթադրել թէ մին կրնայ շարժիլ առանց տակնուվրայ ընելու բոլոր միւսները : Պուլկարիա թերեւս յօժարէր շարժիլ Սերպիոյ դէմ՝ գրաւելու համար Մակեդոնական այն երկիրները որոնցմէ զրկուեցաւ Պալքանեան երկրորդ պատերազմին պատճառով : Այդպիսի շարժում մը սակայն իր վրայ պիտի հրաւիրէ , գրեթէ վստահաբար , Յունաստանի եւ Ռումանիոյ յարձակումը : Յունաստան ապահովելու համար Սէլանիկը եւ Ռումանիա Տուպուճան՝ ամէն միջոց պիտի գործածեն որպէս զի անփոփոխ մնայ Պուքրէշի դաշնագիրը :

**Քունդառեալ չափաւորութիւն**

Ռումանիա իր կարգին կը վարանի անսալ անոնց որք կը հրաւիրեն զինք քայիլ Աւստրիոյ վրայ՝ գրաւելու համար Պուքովինան եւ Թրանսիլվանիան : Եւ այս վարանումը իրաւացի է , քանի որ Պուլկարիա կրնայ միջամտել զինուզօրութեամբ եւ ետ խլել այն հողերը որոնք իրմէ խլուեցան Պուքրէշի նոյն գաշնագրով : Յունաստան եւս ազատ չէ իր բանակը եւ նաւատորմը ուզած կողմը գործածելու , ստիպուած ըլլալով միշտ կազմ ու պատրաստ գտնուիլ իր դրացիէն յանկարծական յարձակումի մը դէմ : Պուքրէշի դաշնագիրը զոր մինչեւ ցարդ դատապարտած էինք իբր անիրաւ եւ անօգուտ հիմա դէթ կը ծառայէ իբր չափաւորիչ մը յատուոն խորհուրդներու : Թէ ո՛րքան պիտի տեւէ այս բռնադատեալ չափաւորութիւնը Սոփիայի , Պուքրէշի եւ Աթէնքի մէջ , այդ ուրիշ խնդիր է :

**Նոր ուղղութիւն**

Բայց ոչ Պուքրէշի դաշնագիրը եւ ոչ ուրիշ որեւէ երկիւղ ազդող մարդկային կարգադրու-

թիւն կարող են ապահովել խաղաղութիւնը Պալքաններուն եւ աշխարհին : Բռաներորդ դարու քաղաքակրթութիւնն ահա ընդհանուր պատերազմին մէջ կը գանձ իր գերեզմանը : Իսպանագիրներու անզօրութիւնը ապացուցուած է և պատերազմի պատրաստութեամբ խաղաղութիւնը պաշտպանել փորձողներու շարժ անազին իրարանցում կը տիրէ : Նոր դրութիւն մը պէտք է գտնել ազգերու յարաբերութիւնները ճշդող , նոր ուղղութիւն մը մարդկային զարգացման : Կը մնայ փորձել այն սկզբունքը որ Գողգոթայի վրայ արիւնոյվ կնքուեցաւ : Սաղաղութիւն պիտի տիրէ , երբ ազգերն ըմբռնեն թէ բոլոր մարդիկ եղբայր են՝ նոյն Աստուծոյն զաւակները :

**ԱՐԴԱՐԱՑՈՒՄ**

Ի՞նչպէս կրնայ մարդս արդարանալ Աստուծոյ առջեւ : Այս է բոլոր կրօններուն կեդրոնական հարցը : Մարդս իր ստորնագոյն վիճակին մէջ անգամ զիտակից է թէ բան մը կը պակտի իրեն , աններգաշնակութիւն մը կայ իր բնութեան մէջ զոր կ'զգայ թէ վերցնել պէտք է , ապա թէ ոչ՝ չկրնար բնականոն եւ ուղիղ վիճակ մը ունենալ : Ի՞նչպէս կրնայ այդ վիճակն ստանալ :

Տրուած բոլոր պատասխանները կրնան երկու կարգի բաժնուիլ ստպէս . անոնք որ կը սորվեցնեն թէ մարդս կրնայ իր անձնական գործերով արդարանալ Աստուծոյ քով եւ անոնք որ կը պնդեն թէ արդարացում կ'ըլլայ միմիայն ի Բրիստոս հաւատքով : Փրկութեան տեսակէտով երկու կրօն միայն կայ եւ կրնայ ըլլալ աշխարհի մէջ , գործերու կրօն եւ Բրիստոնէական հաւատքի կրօն :

Ամէնս ալ գիտենք թէ հեթանոս կրօնները իրենց երկրպագուներուն կը սորվեցնեն թէ պարտին իրենց գործերով արդարանալ : Ասոր համար կ'ըլլան զօհեր , ուխտագնացութիւններ , ուխտեր , ընծաներ , անձնուրացութիւններ , տանջանքներ , եւն . , զորս այդ կրօնները կը պահանջեն եւ զորս անոնց հետեւողները սիրայօժար յանձն կ'առնեն որպէս զի բաղձացեալ բարիքներն ստանան : Սակայն լոկ հեթանոս կրօններու մէջ չեն գտնուիր այս բաները : Ա-

սոնցմէ զգուշանալ պէտք է բարձրագոյն կրօններուն մէջ ալ : Քրիստոնէութիւնն անգամ ազատած չէ մարդուս իր փրկիչն ըլլալ ուղիուն ազդեցութիւնէն : Քրիստոնէայ եկեղեցիին մէջ ծագած մեծագոյն վէճերէն մին , որ դեռ գաղարած չէ , արդարացման հետ գործերու յարաբերութեան այս հարցին շուրջ կը գտնուայ : Բողոքականները կ'ըսեն ինչ որ Նոր Կտակարանը կ'ըսէ , թէ արդարացումը գործերով չըլլար , այլ միայն հաւատքով : Ուրիշ եկեղեցիներ ընդհանրապէս աւելի կամ պակաս շեշտով կ'ըսեն թէ հաւատքով չէ միայն , այլ հաւատքով ու գործերով միանգամայն , որ մարդս ընդունելի կ'ըլլայ Աստուծոյ : Իրեն համար բան մը ընելու , իր արժանապատուութիւնը ցոյց տալու , գէթ չափով մը Աստուծմէ անկախ ըլլալու բաղձանքը այնքան զօրեղ է մարդկային սրտին մէջ որ Քրիստոնէութեան ունէ ձեւ , ուր մարդկային վարդապետութիւններ ու սովորութիւններ կ'արտօնուին մուտ գտնել , անվրէպ մուտքութեան մէջ իյնալու ենթակայ է այս մասին :

Արդարացում հարկ է , վասն զի մարդս մեղաւոր է եւ իր գործերուն համար պատասխանատու կը ճանչցուի արդար Աստուծմէ : Մարդս կտորած է Աստուածային օրէնքը եւ դատապարտութեան տակ է իր մեղքին համար : Պէտք ունի ազատուելու իր կտորած օրէնքին բոլոր պատիժէն , վերստին ընդունելի ըլլալու Աստուծոյ եւ հետեւապէս հաղորդ բոլոր այն բարիքներուն , որոնցմէ զրկուած էր իր մեղքով : Սոսկական ներումէ աւելի բան մ'է այս : Եթէ մէկը մարդկային ատեանի մը կողմէ արդար հռչակուի , այս չնշանակիր թէ ներում գտած է ան , այլ թէ անպարտ է , կը ճանչցուի եւ կը հրատարակուի թէ գործած չէ այն արարքները որոնց համար ամբաստանուած էր : Աստուած կրնար վեհապետի մը նման ներում չնորհել՝ սոսկ բարեսիրտար կամ բարի գործերու փոխարէն կամ աղօթքի իրրեւ պատասխան : Եատեր այսպէս կը խորհին : Բայց Աւետարանին նայելով այս չէ այն կերպը որով Աստուած կը վարուի մեղաւորներուն հետ : Պարզ ներումէ շատ աւելի բան կ'ընէ Ան , եւ չնրեր մինչեւ որ ներման ամուր ու արդար հիմ մը չհայթայթէ : Ուրիշ խօսքով , կը ներէ համաձայն իր սրբութեան , զոր կը ներկայացնէ մարդոց հետ իր բոլոր վարմունքին իրրեւ գլխաւոր նպատակը : Օրէնքին պատիժը ,

հոգեւոր , ժամանակաւոր եւ յաւիտեանական մահ , ամբողջովին կը վերցուի եւ Քրիստոսով կը տրուի յարութիւն երանութեան , պարգեւ Սբ. Հոգիին եւ կեանք յաւիտեանական : Ուստի արդարացումը անցեալին սրբագրումը չէ միայն , կը պարունակէ նաեւ հոգիին ապագայ վիճակը :

Արդարացման հիմը կատարեալ արդարութիւն է : Առանց ասոր՝ արդարացումը պիտի ըլլար զաւեշտ մը , սոսկ օրինական կեղծիք մը , ինչպէս կոչուած է յաճախ : Այսինքն , Աստուած արդար պիտի հռչակէր մեղաւորը եւ իբրեւ արդար պիտի նկատէր զայն , երբ արդար չէր եւ պատճառ չկար արդար հռչակելու զայն : Աստուածային կամքի քմահաճ արարք մը պիտի ըլլար այս : Սակայն այսպէս չգործեր Աստուած : Ինչպէս բսած է մէկը , «Աստուած չարդարացներ առանց արդարութեան , ոչ ալ առանց այնպիսի արդարութեան որ պատիւ կը բերէ իր օրէնքին եւ կը բարձրացնէ անոր հեղինակութիւնը տիեզերքի առջեւ :»

Մարդիկ կը սխալին , երբ կը կարծեն թէ կրնան իրենց իսկ ճիգերով հասնիլ արդարութեան այնպիսի վիճակի մը , որ էական պայման է արդարացման : Օրէնքով արդարացման բոլոր գրութիւններուն հիմը կազմող սխալն այս է : «Մարմին մը պիտի չարդարանայ օրէնքին գործերովը :» Սակայն մեր եկեղեցիներուն մէջ անգամ մարդիկ կը գտնենք որ տակաւին կը փորձեն իրենց անձերը Աստուծոյ ընդունելի ընելու այս անյոյս ձեռնարկը : Կ'այխատին արտաքին օրէնքի մը հնազանդիլ , որպէս զի յաջողին այնչափ բարի ըլլալ որ վերջապէս ընդունուին Աստուծմէ : Ամէն այսպիսի ճիգեր ունայն են :

Արդարութիւնը որու վրայ հիմնուած է արդարացումը՝ չէ այն զոր մեղաւորն անձամբ իր ճիգերով , ստացած է օրէնքին պատուիրանները պահելով : Եթէ մարդուս հնար ըլլար սկիզբէն կատարելապէս պահել օրէնքը , այն ժամանակ , ինչպէս կը ցուցնէ Պօղոս , փրկութիւնը գործերով պիտի ըլլար եւ ոչ չնորհքով : Այն ժամանակ Աստուած մարդոց հետ պիտի վարուէր իրենց արժանաւորութեան համեմատ : Պիտի արդարացնէր զանոնք , վասն զի արդար էին անձնապէս ու անհատապէս , ինչպէս կրնանք երեւակայել իրենց առաջին վիճակը պահող հրեշտակներուն արդարացումը : Թէ կարելի չէ որ մեղաւորին անձնական արդարութիւնն ըլ-

լայ անոր արդարացման հիմը՝ սապլս կ'ամփոփուի ինդերը Ամերիկացի աստուածաբանի մը կողմէ .

(1) Իսկապէս, մարդս իր բնական վիճակին մէջ, մեղաւոր ու յանցաւոր վիճակի մէջ է, Աստուծոյ արդար զատապարտութեան ենթակայ: Բոլոր մարդիկ գիտեն զայս, թէեւ միշտ չեն յօժարիր խոստովանիլ: (2) Նոյն իսկ եթէ մեղաւորն ապաշխարէ եւ այլեւս չմեղանչէ, չէ կարող մաքրել անցեալը: Անոր նախկին բոլոր մեղքերուն դատապարտութիւնը իր վրայ պիտի մնայ: (3) Բաց աստի, թէեւ բոլոր մարդիկ բնական կարողութիւն ունին ապաշխարելու, եւ հետեւապէս իրենց չապաշխարելուն համար յանցաւոր են, մեղքին իշխանութիւնը այնչափ մեծ է որ մեղաւորը բարոյապէս անկարող է Աստուծոյ դառնալ: (4) Մեղաւորին կարօտութիւնը լոկ ներում չէ, եւ եթէ Աստուած իրօք կ'ուզէ զմարդիկ փրկել, մեղաւորին պարզ ներումէ աւելի բան մը պարտի ընել: (5) Մարդիկ կրնան իրենց յանցանքն ուրանալ, ինչպէս շատեր կ'ուրանան, բայց այս ուրացումը չարգարացներ զանոնք: Աստուած կ'ամբաստանէ զանոնք եւ Աստուծոյ օրէնքը կատարեալ օրբութիւն կը պահանջէ անոնցմէ: (6) Հաւատքը չկրնար արդարութեան համազօր համարուիլ: Աստուած կը պահանջէ լման հնազանդութիւն:

Ուստի կը տեսնենք թէ մարդու ճիգերէն յոյս չկայ բնաւ, ամենափոքր կարելիութիւն չկայ որ մարդս երկնից արժանանայ օրէնքին դործերով: Այդ ճամբան ամբողջովին փակ է:

Այս է Աբ. Գրոց ուսուցածը: Սբ. Գիրքը կ'ըսէ թէ ամէնը դատապարտութեան տակ են: Օրէնքին գործերը, օրէնքին պահանջած ամբողջ հնազանդութիւնը, կարող չեն այս դատապարտութիւնը վերցնել, ոչ թէ օրէնքին մէկ պակտութեամբ, այլ մարդուն յանցանքով:

Կը յուսանք գալ շաբթու վերստին անդրադառնալ այս հարցին:

Միխիթարութեան կարօտ մէկը թող ձեռքի ճշմարիտ սեղմում մը զգայ, եւ ահա կը լուսաւորուի անոր ուղին եւ ոչ ոք կ'աղքատանայ այդ պատճառով: Մարդիկ մարդ են. թէեւ յաճախ կը ծածկենք մեր ցաւերը, ձեր կարեկցութեան փափաքողներ կան. տուէք ու մի զլանաք:

# ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔ

## ԱՂՕԹՔ

Կամեցող Բարեաց Տէր համարաք, մի Ըողոր զի է համա անյին իմոյ քնալ. այլ առաջնորդեա ինչ լինել միշտ ըստ համայ Բարեխարաց: Արեայ էրինաոր, որոք ինչ զարայոնիան Ի՞նչ զար Խոսարացար սերելեայ Բար. եւ զբարոյ զերբոյ ի՞մ արել զԵղս, եւ սերել զԵղս միայն, եւ արել զհամա Ի՞նչ:

## ՍՈՒՐԲ ԴԱՏԵՐԱԶՍԸ

### ՎԵՐ. ՏՈՔԹ. ՃՈՆ ԸՆԵՐԸ

Այն պատերազմին մէջ արձակում (զինադարարում) չկայ: Ժող. Բ. Թ

Ա. Կեանքը պատերազմ մըն է: Եւ այս ճշմարիտ է ոչ միայն մարդկային կեանքին համար, այլ ամէն տեսակ կեանքի համար եւ ամէն տեղ: Ո՛ր կայ պատերազմէ զերծ կեանք: Ամէն կենսաւորի պատմութիւնը՝ պայքարի պատմութիւն մըն է: Մարդկային ամէն յառաջդիմութիւն արդիւնք է մաքառումի: Կեանքին նպատակն է յառաջ բերել ո՛չ թէ հանգստութիւն, այլ նկարագիր:

Բ. Արձակում կամ զինադարար չկայ դատարարակութեան եւ իմացական կեանքի այն պատերազմին մէջ, զոր բանասէրը, ուսնողը եւ խորհողը կը մղէ:

Դատարարակութիւն չնշանակեր լոկ սաչափ տարի ուսանիլ վարժարանի կամ գոլէճի մէջ, քննութիւններն յաջողապէս անցնել եւ համալսարանական աստիճաններ եւ տիտղոսներ ստանալ: Երբ մարդ մը կը սկսի անտես ընել իր մտային կրթութեան եւ մարզանքի գործը, յետագիմութիւն կը սկսի տեղի ունենալ:

Գ. Զինադարար չկայ բարոյական կեանքի պատերազմին մէջ, այսինքն, այն պայքարին մէջ զոր պէտք է մղենք կիրքերու, ազանութեան եւ ամէն տեսակ անձնատիրութեան դէմ: Վտանգաւոր բան է պատերազմը դադրած համարիլ, եւ զէնքերը մէկ կողմ դնել:

Բնաւ մի հաւատար թէ չարութեան ոգին կը նիրհէ կամ կը քնանայ: Բնաւ մի հաւատար թէ քու զիւրաւ պաշարող մեղքդ կատարելապէս յաղթահարուած եւ սպաննուած է: Բնաւ մի խորհիր թէ պէտք եղածին չափ բարի եղած ես:

Հոգիի վատասերումը ահաւոր բան է: Կը հնձննք ինչ որ կը ցանննք: Բարոյական ամէն յանցանք կը բերէ բարոյական պատիժ: Իւրաքանչիւր անձնատուութիւն ստորին կիրքերու, իւրաքանչիւր յաղթանակ ընկերատեսցական ձգտումներու, իր անմիջական եւ անտեսանելի ազդեցութիւնը կը թողու մեր նկարագրին վրայ:

Գ. Դարձեալ, մեր հոգեւոր կեանքը կը տկարանայ եւ կը փճանայ, եթէ զանց ընենք կանոնաւորապէս մարզել եւ մշակել զայն: Եթէ անփոյթ գտնուինք, անհրաժեշտապէս ետ պիտի երթանք, եւ կորսնցնենք ինչ որ ունէինք: Աստուծոյ հետ այն անձնական հաղորդութիւնը, որ օրհնութեանց օրհնութիւնն է, կարելի չէ որ առանց պայքարի ձեռք բերուի եւ կամ պահպանուի:

Ե. Հաւատքի պատերազմին մէջ եւս զինազուլ չկայ: Աստուած զմեզ կ'առաջնորդէ հաւատքի յաղթանակին այն տտեն երբ մենք կը դիմադրաւենք, իւրաքանչիւրս անձնապէս, իմացական դժուարութիւններ, մտային շուտութիւններ եւ տարակոյտներ, և կը յաղթահարենք զանոնք: Հոգեւոր բաներու մասին խորաթափանց եւ պայծառ տեսութիւն կը շնորհուի անոնց միայն որոնք քրտնաթոր աշխատութիւն կը թափեն զայն ձեռք բերելու համար:

Վստահ եղիր թէ կարելի չէ խոյս տալ պայքարէ: Անով միայն կրնանք իւրացնել մեզի համար տրամադրելի եղած ճշմարտութիւնը: Անով միայն կրնանք ունենալ հոգեւոր ոյժ, յստակատեսութիւն եւ նկարագիր:

Զ. Կայ նաեւ հանրային կեանքի պատերազմը, այսինքն, մեր ընկեր արարածներուն բարւոյն համար մղուած պայքարը, լաւագոյն քաղաքներու, լաւագոյն պետութիւններու, լաւագոյն վարժարաններու, լաւագոյն եկեղեցիներու համար տեղի ունեցող կոիւրը, և մարդկային ընկերութիւնը Գրիստոնէական սկզբունքներու համաձայն վերանորոգելու եւ վերակազմելու համար կատարուող մաքառումը, — եւ

այս պատերազմին մէջ ալ զինապաշար չկայ: Աշխարհի յառաջդիմութեան Աստուածային շարժման մէջ մենք ունինք մեր դերը, եւ այդ դերը պէտք չէ որ լոկ կրաւորական ըլլայ: Աստուած մարդերու միջոցով է որ իր մարդ արարածներուն կ'օգնէ, չարին դէմ իր ճակատամարտները կը մղէ, անիծաբեր անօրէնութիւններու վրայ իր յաղթանակները կը շահի, եւ իր զաւակները կը փրկէ:

Յաճախ կ'ըսուի թէ կեանքին մէջ լաւագոյն բանը խաղաղութիւնն է. բայց յիշենք թէ միակ խաղաղութիւնը զոր կ'արժէ ունենալ այն խաղաղութիւնն է որ կը տրուի պայքարի մէջ եւ պայքարի միջոցաւ:

Հ Ա Մ Բ Ա Ր Զ Ո Ւ Տ

(Կիրակօրեայ Գարգի Դաս, Գեկ. 20)

Ղուկ. ԻԳ. 50-58, Գործ. Ս. 1-11

Կը վայէր որ Յիսուս իր յարութեանէն ետեւ աշխարհէս մեկնէր՝ մահուան ծանօթ կերպէն տարբեր եղանակով մը: Կարելի չէր որ գերեզմանէն յարութիւն առնելով մահուան յաղթիլէ ետեւ դարձեալ անոր զօրութեան զոհ իյնար տկարաբար: Ոչ ալ կարելի էր որ շարունակէր մարդոց մէջ ապրիլ, տեղային ու տեսանելի բաներուն սահմանափակելով իր պաշտօնէութիւնը: Ուստի եկաւ անյայտացում մը, որ մահ չէր, անյայտացում մը տարօրինակ ու խորհրդաւոր: Բայց ոչ աւելի հրաշալի քան կեանքն ու նկարագրին անոր որ մեկնեցաւ այս կերպով:

Աշակերտներն զգացին թէ յարութեան յաջորդող այն քառասնօրեայ զարմանայի հաղորդակցութիւնը վճռապէս վերջացաւ: Ոչ եւս պիտի երեւէր ան տեսանելի կերպով, այլ պիտի զրկէր այն միւս Միթիթարիչը, որ իրենց հետ պիտի ըլլար յաւիտեան:

Համարձման Ֆիզիքական հանգամանքներուն վրայ հայեցողութիւններ ընել զուր ու անօգուտ ձեռնարկ է: Ոչ ոք զիտցած է երբեք թէ ո՛ւր տարուեցաւ Յիսուսի մարմինը եւ ի՞նչ փոփոխութիւններ կրեց: Այս այնքան վեր է մեր գիտութիւնէն որ ոչ մէկ անհատի ենթադրութիւններ ամենազոյզն արժէք ունին: Մենք չենք ուզեր լսել զանոնք: Այսու ամենայնիւ սա յայտնի է պատմութեանէն թէ ճշմարիտ

մարդկային կեանք մը, ճշմարտապէս մարդկային, գլեց անցաւ մարդկային մեր պայմանները եւ տեղաւորուեցաւ տիեզերքի ամինապսեմ մարգերուն մէջ։ Քրիստոսի այդ մարմինը տակաւին կ'ապրի խորհրդաւոր եւ անձանօթ մէկ կողմը այս լայնարձակ արարչագործութեան, որու փոքր մէկ խորշը կ'ապրինք մենք։ Մարդկային սեռն ուրեմն, որպէս կը սորվեցնէ մեզի Համբարձումը, կրնայ հանգիստ ըլլալ երկրէս տարբեր տեղ մը եւս։ Անբաններէն աւելի ազնիւ ընկերներ ունի։ Յարութիւնը ցուցած էր թէ մարդկութիւնը կրնայ դարձեալ ապրիլ հոս երկրի վրայ, մահուան աղէտէն իսկ ետեւ, որ ամէն բանի վախճանը կը թուի այնքան սոսկալիորէն։ Համբարձումը ցոյց տուաւ թէ այս մարդկութիւնը որ փոքր մոլորակի մը մէջ սահմանափակուած կը թուի՝ կարող է երթալ երկրէս անդին, ամէն բաներու մինչեւ ծայրը որոնց վրայ կը տիրէ Աստուած, եւ բնակատեղի ու ընկերակից գտնել հեռագոյն աստղէն անդին։

Այս ամէնը լիովին ըմբռնել այն ատեն միայն կարելի է, երբ մահուան բովանդակ երեւոյթը եւ գաղափարը հիմնովին փոխուին մեր տեսութեան առջեւ։ Մարդ էակին համար ահաւոր բան է այս երկրէն դուրս ելլել, եթէ մարդկութիւնը լոկ այս երկրի հետ ունի ունէ ծանօթ յարաբերութիւն։ Ան կ'երթայ արտաքին խաւարը։ Կը նստուի գահավէժէն հոն, ուր իրմէ առաջ միլիոնաւորներ նստուած են, եւ հակասակ այդ միլիոնաւորներուն որ իրմէ առաջ նստուած են՝ ուրիշներու չափ անտեղեակ է թէ ո՛ւր կը դիմէ այդ ոստումով։ Եւ ահա տեղի կ'ունենայ Համբարձումը։ Օր մը մարդ էակ մը, լաւագոյնը եւ կատարելագոյնը բոլոր մարդ էակներուն որ երբեք ապրած են, այն որու մարդկութիւնը կատարեալ էր Աստուածութեան հետ ճշմարիտ միութեամբ, մարդկային վիճակի մէջ անհետացաւ մարդոց տեսութենէն, անհետացաւ ողջ ու կենդանի ըլլալով յայտնապէս։ Չենք կրնար անոր հետեւիլ։ Ամպը առաւ զայն։ Եւ սակայն գիտենք թէ մեր փոքր աշխարհին սահմաններէն դուրս տեղ մը անոր ճշմարիտ մարդկութիւնը բնակարան մը գտաւ։ Անոր վրայ շատ աւելի տեղեկութիւն ստանալու տենչ կրնանք ունենալ։ Բայց արդէն շատ տեղեկութիւն ունինք՝ ստոյգ գիտնալով կեդրոնական սա մեծ իրողութիւնը թէ մարդկութիւնը կարող է երկրէս անդին

ապրիլ, կարող է կենսական ընդարձակ յարաբերութիւններ պահել տիեզերքին հետ։ Այսօր գացող մարդն ուրեմն խաւարը կ'երթայ դարձեալ, բայց այդ խաւարին մէջ հիմա լոյսի շաւիղ մը կայ եւ անոր ծոցին մէջ լոյսի բնակարան մը, ուր կը դիմէ ան։ Վասն զի Յիսուսի մարդկութիւնը տեղ մը սեփականած է մեծ տիեզերքին մէջ։ Անոր մարդկութիւնը գացած է նախ, եւ ծանօթ կ'ընէ ընդարձակ անձանօթը։ Մեր մտածումներն այնպիսիներու վրայ որոնց մահը տեսանք, նաեւ մեր մտածումները բուն իսկ մեր յառաջիկայ մահերուն վրայ, կրնան այս խորհուրդին շուրջ հաւաքուիլ եւ վստահութիւն ու անգորր գտնել։ Տարակոյս, ցաւ եւ մահ, ասոնք կրնան ըլլալ,՝ եւ ճշմարիտ հոգիին համար ըլլալու են, Չիթենեաց ինչուան ամպին նման, որու մէջէն ամբարձաւ Աստուծոյ Որդին իր Հօրը աջ կողմը։

«Մենք ալ որչօղ մնացած ենք՝ անոնցմով մէկտեղ պիտի յափշտակուինք ամպերով Տէրոջը առջեւ ելլելու օդին մէջ, եւ այսպէս յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք։ Ուստի մէկզմէկ մխիթարեցէք այս խօսքերով։»



ԴԵՌԱՅԱՍՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՌԻԻԾԻՆ ԲԵՐՆԷՆ

ԳԼՈՒԽ Ե.

Մարկոս Աւրեղիոս

Ճլամինիոս կնոջմէն բաժնուելէն վերջ, իր գործին զնաց պալատան միւս կողմը։ Թէեւ մտադրած էր իր կնոջ հաւատաւորութեան խնդիրը բալորովին գաղանի պահել, բայց քիչ վերջ կայսրը ամէն բան առաւ բերնէն։ Երբ Մարկոս Աւրեղիոս սենեակէն ներս մտաւ եւ տեսաւ իր գրագիրին տխուր դէմքը, վայրկեանապէս կուահեց թէ բան մը տեղի ունեցած էր, ու անմիջապէս հարցուց թէ ի՛նչ պատահած էր։



«Այո, Տէր իմ, մեծ հոգի մէջ եմ. աստուածաները դիտ բոլորովին երեսէ ձգեցին»

«Ոչ, ոչ, Ֆլամինիուս, այդպէս մի ըսեր. մեր օրերուն մէջ աստուածները պաշտողները շատ քիչ են: Ես ինքս քրմապետ ըլլալով կը հաւատամ անոնց, բայց քուրմերէն եւ հաւանմաներէն շատերը չեն հաւատար, իսկ ժողովուրդը բնաւ չհաւատար: Իրաւ, տգէտները իրենց տգիտութեամբ կը պաշտեն զանոնք, սակայն գիտունները ու փիլիսոփաները թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ աստուածներուն վրայ կը խնդան, անանկ որ եթէ աստուածները քեզի պէս գիրենք սրտանց պաշտող մը ունին, զանիկա ալ երեսէ չեն ձգեր»

«Բայց եթէ քեզի սիրելի մէկը — կեանքէդ ալ աւելի սիրելի — մերժէ զանոնք, եւ բացէ ի բաց ուրիշ աստուծոյ մը դառնայ, այն ատեն ի՞նչ կ'ըսես»

Մարկոս Աւրելիոս երկար նայեցաւ Ֆլամինիուսի երեսը. «Կինդ բսել կ'ուզես, չէ՞. ան ալ նորաձեւութեան հետեւելով՝ գացեր Իոնսն ու Սերափիսը կը պաշտէ»

«Մեր է թէ այդ ըլլար միայն եղածը, կինս գացեր եկեր այդ անիծեալ Քրիստոնեաներէն հրապուրուեր է»

«Քրիստոնեաներէն. ի՞նչ, միթէ կարելի՞ է որ Հոովմայեցի տիկին մը այդպիսի օտորին ազանդի մը յարի»

«Իրաւ որ տարօրինակօրէն յամառ ալ են. երևակայէ որ անոնցմէ մէկ քանիին առիւծին նետօւիլը, փոխանակ զանոնք վախցնելու եւ իրենց հաւատքէն ետ կեցնելու, ալ աւելի եւ ունոյ ներշնչեր է անոնց, եւ կինս ալ այդ պարագայէն ազդուելով գացեր միացեր է անոնց»

«Հսել է կինդ վերջնականապէս միացեր է ատոնց. չիտակը հաւատարս չգար» ըսաւ կայսրը:

«Այո» պատասխանեց Ֆլամինիուս, «անցեալ գիշեր, փոխանակ կայսրուհիին տուած խնձոյքին գալու, գացեր Քրիստոնեաներուն ժողովին ներկայ գտնուեր է»

«Արդարեւ խելքս չհասնիր» ըսաւ կայսրը, «թէ որ կինդ աշխարհիկ կիներէն ըլլար, պիտի հասկնայի որ այդպիսի կեանքի մը միօրինակութենէն ձանձրանալով՝ առաջին դէմը ելած նորեկուկութեան յարեր է իբր պարզ քմահաճոյք»

«Բայց իմ Ֆլավիան այդպիսի կիներէն չէ»

զաւակներէն աւելի սիրած բան չունի աշխարհի վրայ»

«Հը՛մ, ըսել է որ եթէ ճարը կայ զինքը այդ նոր հաւատքէն ետ կեցնելու, այն ալ իր զաւակներուն միջոցաւ պիտի ըլլայ» ըսաւ կայսրը:

«Ըսի իրեն որ ալ ասկէ վերջ կինս չէ» ըսաւ Ֆլամինիուս:

«Ատ աղէկ, նայէ որ ատոր վրայ հաստատ կենաս: Ասկից զատ, զաւակներէդ զատէ զանիկա, գոնէ ժամանակուան մը համար. չըլլայ որ անոնց միտքերն ալ իր նոր կրօնքովը լեցնէ» Մարկոս Աւրելիոս մտքէն չէր անցնէր անգութ ըլլալ, այդ խրատը իրապէս Ֆլամինիուսի եւ Ֆլավիայի օգտին համար էր որ կու տար: Ֆլամինիուս անմիջապէս գնաց տղայոց մասին կարգադրութիւն ընելու: Ժամ մը վերջ վերադարձաւ. արդէն իսկ տղաքը ճամբայ ելեր էին դէպ ի Սրիշիա, եւ Ֆլամինիուս ալ պատրաստ էր խաղաղ սրտով իր գործերուն պարտապնուլ. գործը բնաւ պակաս չէր կայսեր գրագիրներուն համար, քանի որ ինքն իսկ անխոնջ աշխատող մըն էր: Այդ օրը լրաբեր մը եկեր էր Բրիտանիայէ եւ լսեր էր թէ տեղւոյն բնակիչները դարձեալ ապստամբած էին:

«Այս կղզեցիներն ալ չյաղթուեցան գնաց» ըսաւ Ֆլամինիուս:

«Այո» պատասխանեց Մարկոս Աւրելիոս, «բոլորովին չեն յաղթուած դեռ. պատճառն ալ այն է որ ամէն մէկ նոր կայսր նոր քաղաքականութեան մը կը հետեւի այդ ժողովրդին նկատմամբ. ես իմ նախորդիս պէս պիտի ընեմ. Քրիստոնեա պէտք է որ Հոովմայ աստուածները պաշտել սորով»

«Այդ կարելի չէ» ըսաւ Ֆլամինիուս, «ամէն ազգ իր աստուածն ունի: Ահա Հրեաներն ալ իրենցը ունին, եւ այն օրէն ի վեր երբ Հոովմ ոտք կոխեցին, ամէն բան գէշ գնաց»

«Այդ քու յիշած Հրեաներդ ալ մեզի չափ կ'ատեն Քրիստոնեաները» ըսաւ կայսրը, եւ ուզելով գործի սկսիլ, հրամայեց Ֆլամինիուսի քանի մը մասնաւոր նամակներ գրել: Մագաղաթն առջեւը ու գրիչը ձեռքը՝ Ֆլամինիուս նստաւ գրելու, բայց իր խորհուրդները ետ կ'երթային նորէն այն սեւ ամպին որ եկեր էր մթագնել իր երջանիկ կեանքին հորիզոնը: «Կեանքս դառնացաւ գնաց» հառաչեց, ու սկսաւ գրել:

Յլամինիուս ուրիշ Հոովմայեցի ազնուական երիտասարդներու պէս օրը պարապ չէր անցներ, եւ անոնց պէս օրը երեք չորս անգամ բաղանիք չէր երթար, այլ մէկ անգամ միայն: Ուրիշներ շատ անգամ ամբողջ օրը հասարակաց բաղանիքները կ'անցընէին, ուր ամէն տեսակ զուարճութիւն կար: Յլամինիուս մինչ կը գրէր, յանկարծ միտքն ինկաւ որ բաղանիքը ժամագրութիւն մը ունէր բարեկամի մը հետ: Արդարեւ բնաւ փափաք չզգաց երթալու, սակայն խօսքը պահած ըլլալու համար՝ ճամբայ ելաւ: Երբ շէնքին բակը հասաւ, քանի մը բարեկամներու հանդիպեցաւ, ու նշմարեց որ անոնք քիչ մը պող կերպով բարեւեցին զինքը, բայց ինք բան մը յայտնի չըրաւ, եւ առանց խօսելու ներս մտաւ: Մաւրինոս — այն անձը որ Յլամինիուսը տեսնել ուզեր էր, — քիչ մը վերջ ներս մտաւ, եւ եկաւ նստաւ Յլամինիուսի մօտ, զոր քանի մը գերիներ անուշահոտութեամբ օծելու վրայ էին:

«Կարծեցի որ ալ բնաւ պիտի չգայիր,» ըսաւ Մաւրինոս յօրանջելով:

«Զբաղած էի,» պատասխանեց Յլամինիուս հակիրճ կերպով:

«Օհ, իրաւ որ մինչեւ հոս գալս ինձի համար մեծ ձանձրոյթ էր,» ըսաւ մյուսը. «բնաւ չեմ սիրեր ուրիշին գործին խառնուիլ:»

«Կամ առուտուրին, էհ,» մէջ բերաւ Յլամինիուս չարածիօրէն, վասն զի գիտէր թէ Մաւրինիոսի հայրը իր մեծ հարստութիւնը գերի առուտուրով ձեռք բերած էր, գործ մը՝ որ ամէն ազնուական իրաւամբ կ'արհամարհէր:

«Մարդու գործի կամ առուտուրի խառնուելու փափաք չունիմ,» շարունակեց Մաւրինիոս, «բայց ի՛նչ ընեմ, կեանք ըսածդ արդէն ուրիշ բան չէ բայց միայն ձանձրոյթ:»

«Ինձի ըսիր որ կարեւոր լուր մը ունիս,» ըսաւ Յլամինիուս անհամբեր:

«Այո, բայց հաւանական է որ արդէն լսեցիր, քանի որ ըսելիքս ամէն մարդու բերանն է արդէն:»

«Ի՞նչը ամէն մարդու բերանն է,» հարցուց Յլամինիուս:

«Կնոջ անունը,» պատասխանեց Մաւրինիոս:

Յլամինիուս տեղէն այնպէս մը վեր ցատկեց որ զինքը օծող երկու գերիները տապա-


լեցան: «Ո՞վ կը համարձակի կնոջ անունը բերան առնել,» պոռաց ան բարկութեամբ:

«Ամէն մարդ. Հոովմի խօսակցութեան նիւթ է դարձեր կինդ, ամէն մարդ կ'ըսէ թէ մեր վրայ այս բոլոր չարիքները բերող Քրիստոնեաներուն մասնաւոր համակրանք կը ցուցնէ եղեր: Նոյն իսկ ըսողներ կան թէ Քրիստոնեայ եղած է:»

Կարծես Յլամինիուսի սիրտը դաշոյն մը մխեցին, երբ ան լսեց որ իր անբիծ կնոջ անունը հասարակ ժողովրդեան բերանը ինկիւ էր: Ուրիշ մը կարելի է այսքան չվիրաւորուէր այս պատահածէն, բայց Յլամինիուսի համար իր պատիւը ամէն բանէ վեր էր, ու իր կնոջ վրայ խօսուիլը իրեն մեծ անպատուութիւն կը սեպէր: Վայրկեան մը բարկութեանէն այնքան ինքզինքէն ելաւ որ քիչ մնաց պիտի յարձակէր Մաւրինիոսի վրայ, բայց կրցաւ ինքզինքը զսպել, եւ առանց բռտ մը իսկ աւելցնելու դարձաւ գերիներուն եւ հրամայեց շուտ լմնցընել իրենց գործը: Մաւրինիոս յուսախար եղաւ Յլամինիուսի լուրթեանէն, վասն զի ինք կ'ուզէր պատմել անոր թէ ի՛նչպէս ինք հետեւեր էր Յլավիայի մինչեւ Գաթագոմպերը տանող պարտէզը, եւ կ'ուզէր տեսնել թէ Յլամինիուս ի՛նչպէս պիտի ընդունէր իր լուրերը: Երբ տեսաւ որ Յլամինիուս հպարտօրէն անդին դարձաւ, ինքն ալ սկսաւ այդ ամէնը ուրիշի մը բարձրաձայն պատմել որպէս զի Յլամինիուս լսէ: Իսկ այս վերջինը ինքզինքը կրցածին չափ շուտ գուրս նետեց սրահէն:

(6)

Ամերիկեան Պորտի նորընտիր նախագահն է Փրոֆ. Էտ. Ս. Մուր, 57 տարեկան, Պրատն Համալսարանէն Փիլիսոփայութեան Վրդ.ի, Եէյլէ ալ Աստուածաբանութեան Վրդ.ի աստիճան առած: 1886ին ձեռնադրուեցաւ եւ 1889ին Փրովիտընսի Կեդր. Եկեղեցիին հովիւ կարգուեցաւ: 1901է ի վեր Հարվըրտի աստուածաբանութեան դասախօս է: 1899ին Պորտի գործադիր ժողովին անդամ եղաւ, 4 տարի ալ ասենապետ, պաշտօն մը՝ զոր շարունակեց վարել անդադար: Աշխարհի շրջանն ըրած է Պորտի համար եւ ամէն տեղ լաւ ընդունելութեան արժանացած: Օժտուած է միսիոնարական հարցը քաջ ըմբռնող միտքով եւ ունի ընդարձակ փորձառութիւն ու լայնատարած համբաւ ու ազդեցութիւն:



ՏԻՊԱՐ ԿԵԱՆՔԸ (\*)

ՓՐՈՑ. ՅՈՎԷ. ՊՈՒՃԻԳԱՆԵԱՆ

1.

Սրբելի Սանուհիներ և Սաներ Եփրատի ,

Ձեր ուսանողական կեանքի երազուն եւ քաղցր մէկ շրջանը փակելու պատեհութիւնը եւ իսկական կեանքի արշալոյսն աւետելու պատիւն ունիմ այսօր ձեր իսկ հրաւերովը՝ որուն համար չնորհակալ եմ :

Կեանքն իր դառն փորձառութիւններովը պիտի յայտնէ ձեզ թէ ի՛նչ գողտրիկ շրջան մըն է որ կը թողէք այս պահուն մեկնելով կրթութեան այս տաճարէն :

Այս յիշատակելի ժամուն իմ պարտականութիւնս է ծանօթացնել ձեզ կեանքը , որուն սեմին վրայ կը կոխէք եւ պարզել ձեր առջեւ Տիպար կեանքին ճեպը՝ որուն հեւալով եւ ձեր ամբողջ էութեամբ նկրտելով միայն պիտի պատկէք յոյսերը ձեր սիրելեաց , Եփրատին ու Հայրենիքին :

\* \*

Տիպար կեանքի հարցը հարցերուն արքան է , բռնապետը իմաստասէրին եւ մարգարէին , արուեստագէտին եւ կրօնապետին : Ան է Կորդեան հանգոյցը զոր լուծել ձգնած են դարերն ու ազգերը եւ զոր պարտի լուծել ամէն գիտակից անհատ :

Ընթանել տիպար կեանքին ու ապրիլ զայն՝ ահա կեանքը :

ՏԻՊԱՐ ԿԵԱՆՔԻՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

1. Բաւոյական բարձր իսկալ :

Տիպար կեանքը սոսկ շնչառութիւն , մարտողութիւն , ֆիզիքական աճում եւ սերնդագործութիւն չի նշանակեր : Այդ իտէալն է բոյ-

սին ու կենդանիին , բայց երբեք նպատակը չէ գիտակցութիւն եւ ազատ կամք ունեցող գերբնական մարդուն : Մարդը բանական եւ բարոյական էակ՝ իբր արարչագործութեան պատկն ու Աստուծոյ պատկերը իր ճակատին վրայ կրող գոյակ՝ պէտք է որ գիտակցի իր մեծ արժանիքին եւ անոր համապատասխան իտէալի մը ձգտի :

Մարդուն եւ անասունին մէջ որքան ալ ֆիզիքական նմանութիւններ ըլլան՝ պէտք է բարձրաբարբառ հռչակել թէ մարդուն եւ անասունին մէջ կեցող խրամատը աւելի խոր եւ ընդարձակ է քան անասունին եւ հանքային գոյակներուն : Ձեր առաջին պարտականութիւնն է ուրեմն ճանչնալ ձեր ստեղծագործութեան մեծութիւնը , ձեր Եսին վսեմութիւնը , եւ անոր արժանի նպատակ մը ընտրել կեանքի :

Ոեւէ գործարանաւոր էակ նպատակի մը կը ձգտի ներհնարումով մը , կեանքը սոսկ շարժում ու ձեւափոխութիւնն չէ , այլ շարժում ու ձեւափոխութիւն մասնաւոր ուղղութեամբ՝ որուն կառավարող ուժը ներքինն է : Կեանքը ներքին ուժերով եւ նպատակներով կառավարուող շարժումն է : Սակայն , բոյսին ու կենդանիին կեանքը անգիտակից մղում մըն է իրեն համար ծրագրուած իտէալին , քանի որ մարդուն կեանքը գիտակից մղում մըն է զէպի իտէալ մը որ կը բղխի բուն իսկ իր էութենէն : Մարդ իր բանավարութեամբ եւ ազատ կամքով ինքնօրէն է եւ գիտակցօրէն կ'ընտրէ ու կը հետապնդէ բարձրագոյն իտէալը : Իտէալն է շարժիչ ուժը մեծ կեանքին , մազնիտական ասեղը տիպար կենցաղին : Իտէալը զսպանակն է կեանքի բոլոր գործառնութեանց , ծիրը տիպար կեանքին :

Կատարելութիւնն է բարձրագոյն իտէալը կեանքին , յառաջդիմութիւնն է օրեկնիք : Փորն ու փառքը , հաճոյքն ու հեշտանքը , տիպար կեանքին գերեզմանափոր դահիճներն են , ձեր կեանքին կոչումն է ինքնիրականացում : ձեր մէջ զտնուած մարդկային բարձրագոյն կարելիութիւնները արտայայտել եւ գանոնք մարմնացնել տիպար կեանքի մէջ : Իտէալի բարձրութիւնն ու անոր հասնելու ձգտումը խորաշարին իսկ է մարդկային արժանիքին : Ոեւէ էակ իր պաշտած առարկայէն վեր չկրնար բարձրանալ : Իտէալը կուռքն է կեանքին եւ ձեր պաշտած իտէալին պէտք է նմանի ձեր կեանքը : Պաշ-

(\*) Արտասանուած Եփրատ Գոլէճի 1913ի երկսեռ շարժանատարից ամսվերջի հանդէսին մէջ :

տեղէք կատարելութիւնը — զԱստուած — եւ նկրտեցէք ունենալ Յիսուսի լման հասակին չափը:

2. Տիպար կեանքը ներգործական է .

Կեանքը ինքնագործունէութիւն է: Հանքային գոյակաները կը շարժին արտաքին ուժերով եւ անոնց հակադէմն տակն են:

Բոյան ու կենդանին ինքնագործունէութիւն ունին, կը հակադէմն միջավայրին եւ զայն կ'իւրաշարժեն: Կեանքը յարձակողական է, կրաւորական չէ: Բոյսը մայրը կը ճեղքէ ու կը փթթի իր ներքին անպարտելի ուժովը:

Մարդկային տիպար կեանքերն ալ նոյն յատկանիշն ունին, անոնք բնական եւ ընկերական միջավայրին սոսկ ստրուկները չեն, այլ կը յաղթեն Բնութեան, կը հակադէմն ընկերական միջավայրին, կ'իւրաշարժեն երկուքն ալ եւ իրենց ներքին բարոյական իտէալը կը մարմնացնեն: Կեղծաւորը, կրաւորակերպ գետնառիւծը, մարդ չէ բնաւ:

Ներգործական կեանքը՝ կեանքն է պայքարի եւ դիւցազնութեան: Ամէն գոյակի հիմնական օրէնքն է ինքնապաշտպանութիւն, եւ կարելի չէ այս օրէնքը ապրիլ առանց պայքարի: Բարոյական բարձրագոյն կեանքը մանաւանդ կը պահանջէ ահարկու պայքար ներքին կիրքերու եւ արտաքին ուժերու դէմ: Նախապաշարումը, սովորամոլութիւնը, հանրային կարծիքը, մոլութիւնը, մոլորութիւնները, բռնապետութիւնը, աստուածացած քսասիրութիւնը, վատասերած բարքերն ու խտաւոր դաւանանքները խորտակել պէտք է բարձրագոյն կեանքն ապրելու համար: Իտէալին ճամբան փշոտ է եւ արիւնոտ, դիւցազներ միայն կրնան անկէ անցնիլ յաղթական: Առանց դիւցազնական պայքարի չկայ հոգիի մեծութիւն եւ առանց հոգիի մեծութեան չկայ դիւցազնական պայքար: Դիւցազնական կեանքը թէեւ գորովուն բայց տոկուն է: «Պայքարը գոյութեան ողնայարն է եւ յառաջդիմութեան օրէնքը» կը գոչէր Գերման գաղափարապաշտութեան դենպետը — Հէկէլ:

Բարոյական կեանքը բարոյականութեան պայքարն է մեր ստորին կիրքերուն դէմ: Դիւցազնութիւնն առաքինութեանց էութիւնն իսկ է:

Ներգործական կեանքը՝ կեանքն է անկախ, ազատ: Մարդուն ներգործականութիւնը կը բղխի իր ազատ կամքէն: Առանց ազատ կամքի եւ

կեանքի՝ մարդը 50 քաչ միս է...: Իրական կրջանկութիւնը մենաշնորհն է միայն անկախ հոգիներուն: Անկախ նկարագիրը խորհրդանիշն է տիպար-կենցաղի: Իր կիրքերէն եւ միջավայրի սարկացնող ազդեցութիւններէն անկախ մարդը փոքրիկ աստուածութիւն մըն է ինքն իր մէջ: Հոգեկան անկախութիւնն է մեծ կեանքին մեծ շարժառիթը. մարտիրոսին, հերոսին, մեծ բարեկարգիչներու, աշխարհակախներու եւ դարերու պաշտամունքը գրաւող մեծ անձնաւորութեանց նկարագրին էն կարկառուն յատկանիշն անկախութիւնն է: Բնական տիեզերքը ստրկական պետութիւն մըն է, մարդ արեւ. զերքը՝ ազատ պետութիւն: Յիզիքական արեւ. զերքը կը կառավարուի ճակատագրական կոյր օրէնքներով, մարդ տիեզերքը բանական օրէնքներով: Յիզիքականը հպատակ է իրմէ դուրս գտնուած օրէնքին, մարդն՝ իր էութենէն բղխող օրէնքին. ահա մարդուն մեծութիւնը: Մարդը դերքնական է իր բանական եւ ազատ հանգամանքներովը եւ պէտք է որ պահէ իր ճիկնիքին, իր ազնուականութիւնը:

Մարդուն անկախութիւնն իր ինքնորոշիչ ուժին մէջ կը կայանայ: Ան մարդը որ իր բառարանին մէջ ոչ միավանկը չունի, բացարձակ զրոյ մըն է: Տիպար կեանքը յարմարացումն է մեր էութեան բարձրագոյն օրէնքին, ոչ թէ համակերպութիւն՝ միջավայրի ամէն հրամայականութիւններուն:

Անկախութիւնը սխալ ըմբռնուած անիշխանութիւնը չէ ընաւ, այլ մեր էութեան բարոյական օրէնքներուն բացարձակ հպատակութիւնն է գիտակից եւ ազատ ընտրողութեամբ: Բացարձակ անկախը բացարձակ բարին է — Աստուած: Ներգործական մարդն հզօր է, ազդեցիկ: Ինքնապաշտպանութիւնը, անկախութիւնը՝ ներգործականութեան բացասական մասն է, իսկ ազդեցութիւնը՝ դրական մասը: Հզօր կեանքը հզօր համոզումներու զաւակն է: Որպէս զի կարենաք ձեր շրջանակներուն ազդել, պէտք է որ ունենաք որոշ եւ զօրաւոր համոզումներ ու դաւանանք կեանքի եւ բարոյականի մասին: Անհատականութիւն ունեցող մարդն է որ կը ներգործէ. անգոյն, առաձգական մարդուն ազդեցութիւնը ոչինչ է: Եփրատի մեծ ճիգերէն մին եղաւ կոել ձեր կրօնական եւ բարոյական համոզումները. կառչեցէք այդ

սկզբունքներուն եւ վստահ եղէք որ ձեր շրջանակին հեղինակութիւնը պիտի կազմէք: Ամէն մարդ ունի իր ազդեցութեան շրջանակը, ու մանցը՝ տան չորս պատերուն մէջ կ'ամփոփուի եւ դերեզմանին եզրը կը վերջանայ: Ոմանք գիւղի մը, քաղաքի մը կ'ազդեն եւ կ'ապրին մեռնելէն վերջ քիչ մը ատեն: Ուրիշներ կան որոնք ամբողջ երկրի մը, աշխարհին, կ'ազդեն եւ իրենց ազդեցութիւնը դարաւոր է: Մեծ մարդոց ազդեցութեան շրջանակը ընդարձակ, ժամանակը երկար, որակն ընտիր եղած է: Ապրուած կեանքն է որ կ'ոգեւորէ կեանքեր: Լեզուն ու գրիչն ազդեցութեան հզօր ազդակներն են, բայց չկայ բան մը այնքան պերճախօս որքան անարատ, անկախ, բարի կեանքը որ բարի կամքին մարմնացումն իսկ է: Հզօր ներգործութիւն ունենալու համար մշակեցէք բարի կամքն ու առաքինի կեանքը: Շաղակրատ մի լինիք, այլ՝ Սոկրատ: Ազնիւ կեանքն անմահ հետքեր կը թողու իր ետին պատմութեան սիրտին մէջ:

### ՀՈԳԵՒՈՐ ՆԱՄԱԿԱՆԻ

«Գրիչ Շարժել»

Սիրելի Շուշան,

Դուն ալ կարգացիր հարկաւ Աւեսաքերի Յայտագիրը 1915 տարւոյ համար, ուր խմբագրութիւնը հրաւէր կը կարդար, ի մէջ այլոց, «գրիչ շարժելու» կարող կիներու: Իսկոյն գրեղ յիշեցի եւ թելադրուեցայ քեզի ուղղել այս տողերը:

Եկուր, ժամագիր ըլլանք քեզի հետ, պարբերաբար, գէթ ամիսը անդամ մը, գլուխ-գլխի տալու Աւեսաքերի հիւրընկալ մէկ անկիւնը: Հաղորդենք իրարու մեր հոգեւոր տպաւորութիւնները ու հոն արձանագրենք:

Տարիներ առաջ, Շուշան, մէկ սեղանի վրայ ուսանք միասին, մէկ սեղանէ մնանք միասին, ու միասին հաղորդակից եղանք մեր Փրկչին սեղանին: Եկուր, հիմա խոնարհ սեղան մը զեանդենք Աւեսաքերի մէկ փոքր անկիւնը, եւ օգուտ քաղելով անոր ազնիւ հրաւէրէն, բերինք դնենք անոր վրայ մեր սրտին ու հոգիին համեստ պաշարը:

Արդէն իսկ կը նշմարեմ անմեղուկ քմծիծաղդ: Գիտեմ, Շուշան, պիտի առարկես թէ այդ հրաւէրը «գրիչ շարժող» համբաւաւոր ու հիներու համար է: Գրիչ շարժե՛ր, մենք ո՛ւր, գրչի շարժում ո՛ւր: Գրիչ շարժելու է, բայց այդ շարժումով կարող ըլլալու է ուրիշները շարժել: Գրիչ շարժող ձեռքին տուն տուող ներքին անձը՝ շարժող ուժ ունենալու է իր մէջ: Հրաւէրը, ահա, ա՛յս կարգի կարող կիներու ուղղուած է:

Իրաւունք ունիս: Ես ալ պահ մը վարանեցայ: Գրիչ ի ձեռին հրապարակ դալ՝ սուր ի ձեռին ասպարէզ ելլելու պէս բան մը թուեցաւ ինձի: Բայց, խորհեցայ թէ մենք Կանանց դասը չպիտի վարենք Այրերու դէմ: Քրիստոս լուծեց այդ դատը: Աստուծոյ քով ոչ արու կայ և ոչ էդ: Փեղծիքի խնդիրներ չպիտի յուզենք, ո՛չ քուէ կը պահանջենք, ոչ ալ Անազոն ըլլալ կ'ուզենք: Եւ ոչ մէկ գրութիւն ստեղծելու կամ փոխելու յաւակնութիւն ունինք: Աստուք գրիչ կամ սուր շարժելու համբաւ ունեցող ուհիներուն կը թողունք:

Ձենք յաւակնիր նաեւ կրօնքին վարդապետական խորութիւններուն մէջ սուզիլ, կամ իմաստասիրութեան բարձունքները խոյանալ: Այլ, պարզապէս, մեր կանացի հոգիին ալքերուն մէջ պահուելու դարեպաշտիկ խորհուրդները ու մեր սրտին ծալքերուն մէջ մխացող զգացումները պիտի պարզենք: Դուն քու շուշանափայլ անմեղութիւնդ տարածէ իրր սաւան ամսօրեայ՝ այս սեղանին վրայ, ես ալ հեղաթոյր ու համեստաբոյր քանի մը ցօղուններ դնեմ հոն: Այս չի՛ բաւեր մեզի համար, քոյր իմ: Համբաւը, հոգ չէ, թող ուրիշներ վայելեն:

Հապա ո՛ւժք: Ո՛ւր գտնել շարժելու ուժ:

Սիրելիս, եկուր, դուն քու քնքոյչ փափկութեամբ եւ ես իմ վտիտ համեստութեամբ, խոնարհինք ու կենանք Մեծ Ուժին ազդեցութեան ներքեւ: Անկէ շարժուինք ու Անով շարժենք: Սուրբ Հոգին սեռին տկարութեան մէջ Սիրոյ հզօր կոթողը կրնայ կանգնել:

Ի տեսութիւն ուրեմն:

Գոյ միշտ սիրով  
ՄԱՆԻՇԱԿ



# ՓԱԻՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴԱՑԻ

## ՓԱԻՍՏՈՍԻ ԲԻԻԶԱՆԴԱՑԻՈՅ

ՓՐՈՑ. ՏՈՔՔ. ՊԱԶԻԼ ԽԱՆ

Պարսից Դեսպանատան Բժեկապետ

Իբր Փաւստոսի գրելու ձեւին օրինակները մենք կը ներկայացնենք քանի մը մէջբերումներ. եւ ընթերցողէն կը խնդրենք տեսնել էջ 170, 202, 122, 128, 143, 203—4—7, 138, 160, 209, 212-13, 222-24, 239, 243, 289, 260-63: «Եւ եկին հասին ի գիւղ մի, որում աւնուն Դաւարիս կոչէին, յորժամ եկն եմուտ զօրավարն Պարսից ի ներք ի գիւղն Դաւարիս, ածէր կապեալ զարքայն Տիրան ընդ իւր: Եւ ասէ Վարազ. Աղէ տեսէք ածուղ, որով երկաթ չողացուցուք զի զաչս խարեսցուք զարքայիս Հայոց: Եւ անդէն բերին ածուղ, որով խարէին զաչսն Տիրանայ» (53): «Երէց ոմն արքունի ուրում անուն Սրջիւնիկ զանարժանս զանկատար զանջնջելի զչարեացն մեղացն զմոռացական տանջանացն կատարեաց զգործն զանտես զանլուր, այսինքն ընդ կենաց զեղն զղեղ մահուն խառնելով. որ ուրեք երբեք այսպիսի գործք յումեքէ ի վերայ երկրի ոչ գործեցան:» (Տակաւին Յիսուսեանք չէին կազմակերպուած): «Իսկ կինն հասեալ առ Ներսէս գոյժ արկանէր զիւրոյ առնն տարապարտ կորուստն, ձչեալ մեծածայն: Վաղ հասիր, ասէ, դեռ զամուսինն իմ զուր առանց վնասու եւ յանցանաց խողխողեն: Իսկ թագաւորն իբրեւ տեսանէր զքահանայապետն, գիտացեալ զբարեխօսութիւն առնն, զիւր սամոյրսն զգլխովն ածեալ, ի փոյթ կնջանն (կանանոց) մտեալ, զիւր զէման երեսացն ծածկէր. քնոյ պատճառ եղեալ զինորա բանսն մի լուիցէ:» «Զի ոչ յափշտակեսցուք, զի ոչ աւարեսցուք, զի ոչ առյուք զայլոց. ի՛նչ կեցցուք այսչափ անչափ զօրաց բազմութիւնք» (14):

Անցնինք հիմա Բիւզանդարանի շահեկան բառերու քննութեանց:

Պէշասպիկ բառը հնութեան Բիւզանդարանական գոհար մըն է, արդի jollowdar կամ շաքիրտ չափառն է՝ որ կարաւանի առջեւ ձիով ճամբորդի առաջ պէտք է հեծեալ վազէ: Եւստ անգամ քաղաքացիի ծառայ մըն է ան որ իր տիրոջ ձիու առաջը պէտք է պահէ, անոր հեծ-

նելուն օգնէ, ասպանդակը մատուցանէ եւ ապա ինք ալ իր ձին հեծած անոր առջեւ ճամբայ բանայ: Հին Պարսիկներ այս ծառան Պիշասպիկ կը կոչէին (առջեւ-ձիու), հիմա jollowdar է (Անգլիական արտասանութեամբ), Տաճկա-Պարսկական բառ մը զոր Փրոֆ. Langlès կը շփոթէ Արաբական ձիւտ, շպար, բառին հետ եւ կը կարծէ թէ Եւրոպայն սխալ պիտի լսած ըլլայ: Ընդհակառակն մենք գիտենք որ Արեւելքի ճամբորդները գրեթէ միշտ ճշմարտութեան աւելի մօտ են քան թէ այն փրոֆէսորներ որոնք յարոտե պատուէրներ կը կարգան համալսարաններէն:

Յայգորել=բարեւել, levée, levy. լրջմտութիւն=հանդիսաւոր ձեւ մը. զգուշացնել=պահպանել, «զգուշանար զսահմանօքն Հայոց» 241. յանդիմանել=երես առ երես բերել. բռնոպ=խառնակ, աշուպ, ապշոպ. ապիզակ=կուրծքի զարդ, ձյ պազակ, զարդ. ջրթափիլ=յարբուիք համեմու իմաստով Պարսկերէնի բառացի հայացում է, آب آبخاز Զուր թափել. վարաւան-զասպասք=վարաւանդ, թամբ. զինօրառք=վարք վերեւինը ۳۰. կարանէ կարան=սահմանէ սահման, کران تا کران. Հօրան մատենիկ=մատեան, Medes, Մեդացւոց խօսքն է. ախերակ=چو բարիք բառէն է անխէր, անպիտան. մերկասիս (124)=Անգլիերէն teat, ծիծերու պատկ բառն է: Դայեակ, ուղմ, բփշկ, դարման, պայքար, պայման, ճամբար, چو ցրօշակ, բախշիչ, գեհկանութիւն (چاد) դատապան, միհանէսք ۴۱۴ (۴۱۴), գամ, անգամ, ۸ քայլ, մուրտաստան Յոյն արմատով (եւ Պարսիկ վերջաւորութեամբ) բոլորն ալ Պարսկերէն են:

Շարք մը Յոյն բառեր կը գտնենք Բիւզանդարանի մէջ, իբր օրինակ ահա. Որթոտոքս, սատրապ, սիւնհոդոս, փիւղակէ, էսկոմիա, սեմիարք, ստրատիլատ, թիւրակէս, պոզատ:

Աշխարհաբառին մօտ ձեւեր են վաներք, վաներով (227), աղանդեր:

Անյուշ կամ անուշ բերդը Անդաբըն է որ է անյիշելին, ան — mention, արիական բառէն. Արտագերս հաւանօքէն usr է եւ կերտէ: Աղուանք Հապանդ մը ունին որ Տէրպէնտը կը յիշեցնէ: Հին Բուլղարք ալ Վաստեայ մը ունէին որ նոր Բուլղարներու Վիտաինին նման է (15): Մծբին հոս Նճբին է, Նէսբինին խիստ մօտ: Արուստտան արեաց երկիր է կամ Ասորոց եր-

կիր, Ատրպատական, ատրպայական, ատրպատճացն, աղրպայիճանի նախնական ձեւերն են, Թաւրէզ, Թաւրէժ:

«Ձկողմանս Գամրաց մինչեւ ի քաղաքն յանկուրացուոց» մեր գիտցած Angora, Էնկիւրին է, թէ՛ անուևով եւ թէ՛ աշխարհագրական գիրքով, Մանաճիր՝, Մանուչէհր چوچوگه. ընդ պատահարօք կապեն (85), دادار օտակապ բառէն է. Խարդիզան, սեւ իշեր, خردزی 143, ձգնատես մահի նամա, աք նամա, ձգնատեսն, ճիշտ Պարսկերէնի հայացումն է:

Արքունիքի եւ տոհմագետերու կանանոցն երբ քառորդ դար մը մօտէն տեսած եմ իմ պաշտօնիս բերումով եւ Փաւստոսի նկարագրութիւններ, էջ 119-127, բուն կեանքէն առած կը գտնեմ: Բիւզանդացին արեւելքի կանանոցները եւ հոն գործող ներքինիները (հայրպետ, մարդպետներ) ուսումնասիրած էր եւ իր պատմութեան ամէնէն շահեկան կողմներէն մէկը սոյն մասերն են: Սոսկումով միայն կրնանք կարգալ այն ընդհանուր ցեղերու ջնջումը զոր ներքինի մը կրնար պատճառել (47): Նկարագրութիւնէն յայտնի է թէ հեղինակն Հայ թագաւորներու որսատեղին անձամբ գիտէ, «մօտ ի Սիւան, ի Սարակ լեռինն, որում տեղին Լսին անուանեալ է, մօտ յորմածս արգելանացն որսոյն էրիոցն, ընդգէմ մուրաստանին աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բռնակեակ ընին» (24): Անոնք որոնք կ'ուզեն մեր թագաւորների, անոնց արքունիքի, կանանոցի, մարդպետներու եւ կղերի ու բոլոր պալատական պաշտօնէից սոսկալի անկումին վրայ գաղափար մը կազմել՝ պէտք է Փառանձեմ Թիկինի պատմութիւնը կարդան: Ներքինիներու մէջ սակայ գաճաճ ճիւղներ կան՝ երբեմն ալ խիստ անձնեայ քաջասիրտ հերոսներ: Փաւստոս երկու տիպերն ալ նկարագրած է, տես էջ 116, 176, 195, Դղակ ճիւղը (208), եւ հաւատարիմ Դրաստամատը (211): Տարաբախտ Արշակ թագաւորի վերջին ժամը եղբերակական է, «Իսկ յորժամ արբեցաւ, եւ գինին եկն զակամբ նորա, արբեցաւ, հպարտացաւ եւ ասէ, Վայ ինձ Արշակայ, այսպէս եւ այս, եւ յայսմ չափու եւ այս անցք անցին ընդ իս: Եւ զայս ասացեալ, զգանալն՝ զոր ունէր ի ձեռինն, որով զմիրգն կամ չամիչն կամէր ուտել, եհար ի սրտի իւրում եւ անդէն սպտակեցաւ, եւ մեռաւ անդէն ի նմին ժամուն մինչ»

ղեռ կայր ի բազմականին, իսկ յորժամ զայս ետես Դրաստամատն, յարձակեցաւ եհան ի նմանէ զնոյն զանակ, եւ եհար յիւրում կշտին, եւ անդէն մեռաւ ու ի նմին ժամուն յայնմ:»

Կնոջ դիրքը հին Պարսկաստանի եւ Հայաստանի մէջ շատ աւելի բարձր էր երբ տակաւին Արաբացուց ազդեցութիւնը իրեն: Թերակղզիէն դուրս չէր տարածուած: Անդովկայ աղջիկ Փառանձեմի պատմութիւնը սակայն ցոյց կու տայ թէ կանանոցի դրութիւնը կար մեր մէջ. հին Պարսիկներն ալ գոց կանանոցներ ունէին շատ մը կանացի դիւցազնական գործերով հանդերձ: Ծպտեալ կիներ կը տեսնենք Ֆէրաիւսիի մէջ որոնք այրերու նման կը կուտին: Փառանձեմի դէմ ունինք Համաղասպեան քրոջ (183) պատկերը, ուր Հայ կիներն ուրիշ գոյներով է որ մեզ կը ներկայանայ:

Ժանուար, ժանաւոր, ժանու, կնջանն, կին, (gynécologie), զան (زوج) բառի փոփոխումներն են եւ կնոջ յատուկ գահաւորակ՝ պատգարակ եւ պահապան կը նշանակեն՝ հաստատելով թէ ամէն պաշտօնեայ անոնց չէր մօտենար, որովհետեւ հարէմլիքի դրութիւն կար:

Մամիկոնեան ցեղի մասին, իրենց Տայք կեդրոնով եւ Էրիւանի(1) բերդով ամէնէն կատարեալ ծանօթութիւնը Բիւզանդարանի մէջ պէտք է փնտռել, Իրօք Հայաստանի վարչական գործերու ղեկավարներն էին երկրի պաշտպանները եւ թագաւոր շինողները, անոնց զաւակներու դայեակներ, եւ անուցիչք. Վաչէ, Վասակ, Մուշեղ եւ Մանուէլ կը բաւեն յարգի ընել սեւէ տոհմ. սակայն Փաւստոս անոնց յոռի գործերու վրայ լիօրէն կը խօսի եւ Արշակունիք իրենց պետական եղանակգործութիւնները Մամիկոնեանց ձեռքով էր որ կը գործէին: Երբ Արշակունիք աղտեղի գործ մը ունէին լրացնելու, Վարդանի մը պէտք ունէին Գնէլ մը ծուղակի մէջ բերելու եւ յետոյ միեւնոյն Վարդանը Վասակով մը վերջացնելու համար սովորաբար Մամիկոնեանց կը դիմէին:

(1) Արդեօք սա Էրիւանի անունը մեզ ծանօթ իլիւսանին չէ՞, անուն մը յատուկ բոլոր աւատական ցեղերու տոհմագետներուն, որոնք միշտ իլիւսանի մը ունին եւ անկէ անմիջապէս յետոյ իլրէկի մը: Մամիկոնեանք թաթարական ցեղ մը (clan) կը կազմէին եւ հարկաւ իրենց տոհմագետը իլիւսանին ունէին, որուն ղղեակն ալ իլիւսանի կամ Էրիւանի կը կոչուէր:

Չինական կամ Թաթարական սովորութեանց հետքեր պահեր էին, անոնց նման զլիսու մազեր կտրել (260), եւ անոնց նման տոհմապետութիւնը գերդաստանի երէց անդամին վերապահել (246)։ Սարսափելի արատներով հանդերձ՝ հսկաներու ցեղ մըն էր սոյն Չինական ղեղին սարսափի տունը իր անվեհերութեամբ եւ կաշառակերութեամբ<sup>(2)</sup>։

Երբայական գաղութներու կարեւորութիւնն ալ Հին Հայաստանի մէջ Բիւզանդարանէն միայն գիտունք կատարելապէս։ Շապուհի գերեզարութեան ցանկերուն մէջ կը գտնենք որ քանի մը Հայ քաղաքներու մէջ Երբայեցիք էին որոնք մեծամասնութիւն կը կազմէին։ Սուրբ Գրքերու նման Բիւզանդարանն ալ ճիշտ պատկերներ ունի տնական կեանքէ ուր ըժշկական իրողութիւնք փաստացի ձեւով կը հաստատուին։ «Եւ կիինն Վարդանայ յղի էր, եւ հասեալ էին աւուրք ծննդեան իւրոյ։ Մինչդեռ ի վեր ի բերդին նստէր ի գահոյս իւրում, եղև գոյժ սաստիկ (էրիկը վարը խողխողած էին)։ Իսկ նա իրբև զձայն գուժոյն լսէր, վազէր ի գահոյից անտի։ Եւ ընդ վաղին ծնանէր զմանուկն» (132)։

Հայաստան ցեղերու խառնարան մըն էր սոյն դարերուն մէջ։ Յատուկ անունները ցոյց կու տան որ ամէն ցեղէ Հայ, Պարսիկ, Յոյն, Ասորի, Երբայեցի անդամներ կային այս խառնիճաղանձ ձուլարանին մէջ։ Նոյն իսկ Մամիկոնեան տոհմին մէջ ունինք Վաչէ, Վարդան, Վահան, Վասակ, Արտաշիւր, Արտաշին, Մուշեղ, Մուշէ, Մանուէլ եւ Կոմս։ Միւսներու մէջ կը գտնենք Առստոմ, Առաւոստոմ, Ասպարուկ, Մահկերտան, Տիրանամ, եւն., եւն.։ Հայ ցեղի տոկունութիւնը գուցէ այս խառնուրդին կը պարտինք մեր կարծածէն շատ աւելի աստիճանով մը։

Բիւզանդարանի մէջ հին սուգի չափազանց ձեւերը (77, 124 եւ 235) գերեզմանատուններու նուիրականութիւնը ու Պարսից վրէժխնդրութեան փոթորիկը որ տակնուվրայ ըրաւ Հայ թագաւորներու շիրիմները (146-148), կը բացատրուին այն սովորութիւններով որոնք տակաւին տիրող ոյժեր են Բախթիարի ցեղին մէջ։

(2) Այս ցեղի բարի Քրիստոնեայ գաւակ մը սպաննց իր հայր Վահանը եւ մայր Որմիզդուխտը, եւ փախաւ ընկաւ Խաչոսեաց մէջ։

Բախթիարցիք արեւմտեան Պարսկաստանի Սպահանի եւ Քարուն գետահովիտի լեռներու մէջ՝ Արաքական եւ Թաթարական ազդեցութեանէ զերծ են ապրեր։ Կրօնամուլութիւն չունին։ Տակաւին Արաքական կանոններ անոնց տնական եւ ժառանգական հարցերու մէջ անզօր են, անոնց կիները բաց երեսով արձակ համարձակ կը շրջին գրեթէ միշտ միայնակ։ Բոլոր Պարսկաստանի մէջ միակ ցեղն է որ հին Արիական լեզուն, սովորոյթը եւ քաջութեան հոգին պահպաներ է Սեմական եւ Թաթարական ազդեցութեանց դէմ։ 1901ին բախտն ունեցանք անոնց լեռներու մէջ պարտելու՝ ցեղապետներու (Իլ-Սանի) վրաննեւրուն մէջ ամիս մը ապրելու եւ իբր բժիշկի գանսնք՝ թէ՛ այրերը եւ թէ՛ կիները մտերմօրէն տեսնելու։ Ագաթանգեղոսի եւ Փաւստոսի ուսումնասիրող մը զինք հին աշխարհի մէջ կը զգայ Բախթիարի ցեղին մէջ։ Տակաւին Սասանեանց օրերու վսեմութեանէն հետքեր կան այս լեռնցիներուն մէջ։ Նոյն իսկ Կիւրոսի եւ մեծն Դարեհի օրերու շիրիմները, հարսանեաց եւ թաղումի հանդէսները ու կոծման արհաւիրքը տակաւին կենդանի են հոն։ Սարսուռ մը կը զգայի ամէն անգամ երբ ձիով ստոնց գերեզմանոցներուն մօտ կ'անցնէի։ Հին քարերը իրենց առիւծի, արծիւի, հրացանի եւ պողովատիկի քանդակներով նուիրական վսեմութիւն մը ունին եւ քաջաց դարերէն կը խօսին։ Բախթիարցին այն ցեղի մնացորդն է որ մեր նախահայրերու հետ թէ՛ զինակցութեամբ եւ թէ՛ կուռով կողք կողքի ապրեցան քանի մը դար եւ Ասիան մեր տեսած աւերակներէն տարբեր երկիր մը շինեցին։

ԿԻԼԿԻՈՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Կիլիկիոյ Աւետ. եկեղեցիներուն ԽԱ. տարեկան ժողովը գումարուեցաւ Յունիս 24ին Այնթապի մէջ<sup>(\*)</sup>։ Վեր. Աբբահամ Յարութիւնեան նախագահ ընտրուեցաւ եւ Յ. Վ. Նաճարեան՝ քարտուղար։

1. Պատուոյ անդամ ընդունուեցան Գահիրեի Հայ Աւետ. եկեղեցւոյ հովիւ Վեր. Հայկազուն Սանդամուր, 3 ձիւղ եկեղեցիներու քարոզիչներ, 9 Աստուածաբանական ուսանողներ եւ 10 եկեղեցիներէ 23 անձեր։

(\*) Կը ցաւինք որ չկրցանք աւելի հրատարակել այս տեղեկագիրը։ Խմբ. Աւետ.



2. Ամերիկեան Աստուածաշունչի Ընկերութեան Արեւելեան գործակալ Տր. Պոէնի նամակը կարգացուեցաւ, եւ Սուրբ Գրոց հրատարակութեան գործին հանդէպ Միութեան համակրանքն յայտնելու համար որոշուեցաւ որ

ա. Ամէն տարի Կիլիկիոյ եկեղեցիներուն մէջ Նոյեմբերի երկրորդ կիրակի օրը տեղեկութիւն տրուի Սուրբ Դիոքիմ Աստուծոյ թագաւորութեան մատուցած ծառայութեան եւ Աստուածաշունչի Ընկերութեան վրայ:

բ. Այդ առթիւ այդ օրը դրամ հաւաքուի Ընկերութեան նպատակին իրագործման համար:

գ. Տր. Պոէնէ խնդրուի յարմար ժամանակներ նոր լուրեր հաղորդել սրուելիք տեղեկութիւններու գործը զիւրացնելու համար:

3. Այժմ հրատարակուող Կիրակեօրեայ Դասադիրին ընդհանուր կերպով գնահատուելուն առթիւ որոշուեցաւ շնորհակալութիւն յայտնել թէ՛ Կ. պոլիս, Պայպը Հաուս, Հրատարակչական Մարմինին, եւ թէ՛ սոյն Մարմինին միջոցաւ այն Ընկերութեան, որ այս նպատակին իրագործման համար 600 տոլար գրամական նպաստ ըրած է:

4. Յարմար դատուեցաւ Միութեան ուրախութիւնն ու համակրանքն յայտնող նամակ մը գրել Տր. Մէքալըմի, անոր այս վերջին քանի մը տարիներու խմբագրութեան միջոցին Աւեսարեւի առած յառաջդիմական քայլերուն համար:

5. Փրոֆէսորներուն բնական անդամ ըլլալու խնդիրը ներկայացաւ, եւ Կ. Թ. Գոլէճի փրոֆէսորներուն իբրեւ Միութեան բնական անդամ ընդունուելու մասին հետագայ քանի մը կէտերը որոշուեցան. (ա) Առ այժմ պէտք չէ որ եօթը անցնի Կ. Թ. Գոլէճի փրոֆէսորներէ բնական անդամ եղողներուն թիւը: (բ) Ընտրելիները, Գործադիր Մարմինի կողմէ առաջին առիթով Միութեան պիտի ներկայացուին, եւ խնդիրը որոշելու պաշտօնն ունեցող Մարմինը իր որոշումը անմիջապէս Միութեան պիտի բերէ: (գ) Այն փրոֆէսորները որոնք Միութեան իբրեւ բնական անդամ պիտի ընդունուին, պայման է որ ժողովական եկեղեցւոյ անդամ ըլլան:

6. Շնորհակալութիւն պիտի յայտնուի անցեալ տարի Ամերիկ. Հայ Աւետ. Միութեան Կիլիկիոյ Միութեան ղրկած դրամական նպաստին

համար: Եւ որովհետեւ յիշեալ Միութիւնը նորէն նպաստ ղրկելու համար խնդրած էր օգնութեան կարօտ տեղերուն անունները իմացնել, պիտի գրուի նոյն Միութեան թէ 80 օսկիի պէտք կայ Այնթապի կայանէն Եօղուն Օլուզի եւ Մարաշի կայանէն Պէպէնի եկեղեցիներուն համար:

7. Ձեռնադրութիւններ. (ա) Որոշուեցաւ Պատ. Սողոմոն Աքքէլեանը ձեռնադրել Ուրֆայի եկեղեցւոյն վրայ, (բ) Պատ. Սամուէլ Ինկիլիզեանը՝ Գիլիսի եկեղեցւոյն, եւ (գ) Պատ. Կարապետ Հասէսեանը՝ Ալպուսթանի վրայ:

8. Արտօնագիրներ. (ա) Այս տարի Մարաշի Աստուածարանական Վարժարանի ընթացաւարտներէն ինը հոգի (Ասատուր Սոլագեան, Գէորգ Սահակեան, Էֆրայիմ Ճընաղեան, Յարութիւն Նօխուտեան, Ներսէս Սարեան, Սարգիս Չօպանեան, Սիմոն Վեհապետեան, Սիրական Աղպապեան եւ Տիգրան Անդրէասեան) պաշտօնական կերպով ղրկուած ըրած ըլլալով, Միութեան կողմէ կարգեալ յանձնախումբի մը ձեռամբ հրատարակուաւ քննուեցան, եւ որոշուեցաւ ամէնուն ալ արտօնագիր տալ տարուան մը համար:

(բ) Ծիպինի քարոզիչ Սիմոն Էֆ. Պէքեարեան Այնթապի կայանին մէջ քննուելով, յարմար տեսնուեցաւ արտօնագիր տալ անոր:

9. Հանգուցեալ Փրոֆ. Յ. Ալիքսան Պէզճեանի մահուան առթիւ Ամերիկ. Հայ Աւետ. Միութեան կողմէ Կիլիկիոյ Միութեան ղրկուած գնահատական եւ համակրական գիրը, որովհետեւ անցեալ տարի Միութիւնը չգումարուեցաւ, այս անգամ կարգացուեցաւ, եւ որոշուեցաւ որ այդ գրութիւնը նոյնութեամբ արձանագրուի տոմարին մէջ եւ շնորհակալութեան գիր մը գրուի յիշեալ Մարմինին:

10. Այս առթիւ ի յիշատակ մեր սիրելի ընկերներուն եւ գործակիցներուն, որոնք Միութեան վերջին ժողովէն հետէ՝ վախճանած են, որոշուեցաւ անոնց անունները արձանագրել Միութեան տոմարին մէջ, սապէս.

Մամուան բուսականը

- (1) Վեր. Պետրոս Թօփալեան 1912
- (2) Եագուպ Էֆ. Տէր Գրիգորեան 1912
- (3) Վեր. Վարդան Նաճարեան 1912
- (4) Վեր. Մանուկ Նիկողոսեան 1912
- (5) Միս Մէյ Ուէլփիթըն 1912

(6) Փրոֆ. Յ. Ալիքսան Պէղճեան 1913

(7) Վեր. Մանուկ Միսիրեան 1913

11. Ընտրութիւններ. Մարաշի Աստուածաբանական Ճեմարանին, Կ. թ. Գոլէճի, Կ. թ. Աղջկանց Գոլէճի վարչական ժողովներէն իրենց պաշտօնավարութեան շրջանն աւարտած անձնաւորութեանց տեղ ի նորոյ ընտրութիւն կատարուեցաւ:

12. Ազգապետարանի խնդիրը. Ազգապետարանի խնդիրը, ազգին բարւոք ծառայութիւն մատուցանելու տեսակէտով, նորէն խօսքի նիւթ եղաւ, եւ շատ մը խորհրդակցութիւններէ ետեւ հետեւեալները որոշուեցան:

(ա) Կիլիկիոյ Միութիւնը Ազգապետարանի ներկայ անկերպարան լիճակին համար միաձայն կը յայտնէ իր ցաւը:

(բ) Միութիւնը երեք անգամէ բաղկացեալ յանձնախումբ մը կ'ընտրէ, որպէս զի մեր Աւետ. ժողովուրդներուն օգտին համար կարելի հասկացողութեան մը դալու նպատակաւ լուրեր հաղորդուին եւ կարգադրութիւններ ըլլան: Այս յանձնախումբը ըստ հարկին կարող պիտի ըլլայ լիազօրներ ընտրել վարչական մարմին հետ խորհրդակցելով:

13. Մեր երեսփոխանները. Ուրախալի իրողութիւն մըն է որ այս անգամ Օսմ. Երեսփ. ժողովին մէջ երեք Հայ Աւետ. անդամներ կը գտնուին: Յանձնախումբի մը յանձնարարուեցաւ շնորհաւորական մը գրել այս մեծայարգ անձնաւորութեանց, խնդրելով հանդերձ իրենց բարւոք ծառայութիւնը պետութեան եւ երկրին համար:

ի դիմաց Կիլիկիոյ Միութեան  
Բարեւոյաբ  
Յ. Վ. ՆԱՃԱՐԵԱՆ  
(Մնացածը յաջորդ անգամ)

Եթէ դուք ու ես, դուք ու ես միայն, փոխանակ տխրելու խնդանք, եթէ դուք ու ես, դուք ու ես միայն, օրըստօրէ բարեսիրտ ըլլանք, թերեւս քիչ ատենէն յաջողութիւն մը գայ, երբ, ո՛հ, երկուքս ալ երջանիկ պիտի ըլլանք, դուք ու ես, դուք ու ես միանգամայն:

Ք

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԻՉԱԶԳԱՅԻՆ ՕՐԷՆՔԻ ՏԵՍԱԿԵՏԷ

Համաշխարհային արդի պատերազմին առթիւ, մամուլի ընթերցողներ յաճախ թեր ուղէմ կարծիքներ եւ տեսութիւններ կը կարդան պատերազմի եւ միջազգային օրէնքի մասին: Արդի պատերազմը իր զարհուրելի ընթացքովը, նախճիրներովը ու ոճրագործութիւններովը, ընդհանուր մարդկութեան ոչ միայն հետաքրքրութիւնը այլ խիղճը ընդոստ արթնացուցած է: Կարելի է ըսել թէ չկայ մարդ մը որ, յայտնի կամ լուելեայն, չգտապարտէ եւ չանիծէ այսօրուան ոճրագործութիւնը: Չկայ անձ մը որ զղուանք եւ զայրոյթ չարտայայտէ այս պատերազմի չարիքներուն դէմ: Անոր համար պատերազմի «հեղինակ հերոսներ»ը, ո՛ր կողմին ալ պատկանին, յանուն միջազգային օրէնքին եւ արդարութեան խօսելով կը ջանան արդարացնել իրենց ոճրագործութիւնները: Կը ջանան ապաստանիլ այս օրէնքին հովանաւորութեան տակ, եւ կ'աշխատին պարտկել իրենց անիրաւութիւնները եւ արդարացնել իրենց արարքները միջազգային օրէնքի տրամադրութիւններովը:

Արդ առաւել եւս շահեկան կը թուի զիտնալ թէ ի՛նչ կը տրամադրէ միջազգային օրէնքը պատերազմի մասին: Ի՛նչ պարտաւորութիւններ կը պարտադրէ պատերազմիկ տէրութիւններուն, բանակներուն, զօրապետներուն, զինուորներուն եւ ժողովուրդներուն վրայ:

Բուն նիւթին անցնելէ առաջ, կը փափաքիմ ըսել թէ այս յօդուածը կը պատրաստեմ հետեւողութեամբ Օսմ. Համալսարանի իրաւաբանական ճիւղին միջազգային օրէնքի ուսուցիչ մեծայարգ Փրոֆ. Ահմէտ Սալահէտօին էֆ.ի բանախօսութիւններուն, ու Յրանսացի նշանաւոր հեղինակներէն Հանրի Ռոշֆորի եւ Պոնիֆիսի երկերու թարգմանութիւններուն, գորըրած է մեծայարգ փրոֆէսորը եւ որոնք կը գործածուին իբրեւ դասագիրք Օսմ. Համալսարանին մէջ: Թուրքիոյ մայրաքաղաքին մէջ հազիւ թէ 3—4 թուրք անձնաւորութիւններ կան որոնք մասնագիտօրէն ուսումնասիրած ըլլան այս օրէնքը, եւ հազիւ թէ 10 գիրքեր կան թարգմանուած թուրքերէնի:

Միջազգային օրէնքը գուցէ շատերուն ազգային պատկանելի հնչէ, եւ մեծ տպաւորու-

Թիւն թողու իրենց վրայ, այդ բառին կազմու-  
թեան եւ պարունակած իմաստին եւ առնչու-  
թեան բերմամբ: Այսպէս, բարեկամներէս մէկը,  
որ կարեւոր քաղաքի մը մէջ հանրային գրա-  
դարան մը հիմնել կը խորհի, իր ծրագրին մասին  
խօսած առեն, միջազգային օրէնքի գիրքերը,  
յատուկ հեղինակութիւնները, այդ գրադարանին  
մէջ զետեղել խիստ անհրաժեշտ եւ կարեւոր  
կը նկատէր: Արդարեւ իրողութիւն է որ այս  
օրէնքը գիտութիւններու կարգը անցած է աշ-  
խարհի ծանօթ տէրութիւններէ ընդունուած,  
իրաւագիտական վարժարաններու մէջ կ'ու-  
սուցուի, և միջազգային մասնագէտ գիտնոց  
կաճառ մըն ալ կազմուած է, ու պարբերաբար  
ներդրուող զանազան քաղաքներու մէջ Քոնկրե-  
ներ գումարուած եւ զանազան վարկածներ,  
տեսութիւններ յայտնուած եւ օրինագիծեր ըն-  
դունուած են, և մեծ տէրութեանց երկիրներու  
մէջ միջազգային օրէնքի պարբերականներ հիմ-  
նուած են: Այսու հանդերձ, զարձեալ մասուկ  
ու թերխաշ գիտութիւն մըն է ան տակաւին:  
Հազիւ թէ դարու մը գոյութիւն ունի: Ասկէ  
առաջ աշխարհի ընդհանուր պատմութեան մէջ  
ոնեւէ հետք չենք տեսներ: Աշխարհի օրէնսդիր  
Հոովմայեցիները եւ սրբազան պատմութիւնը  
գաղափար անգամ չունէին այս գիտութեան  
մասին:

Ուրեմն ի՞նչ է միջազգային օրէնքը որուն  
նկատմամբ Հոովմայեցիք եւ հին ազգերն գա-  
ղափար անգամ չունէին: Միջազգային օրէնքը,  
անկախ պետութիւններու, զինուորական եւ  
քաղաքային կազմակերպութեան տէր կառա-  
վարութիւններու փոխադարձ յարաբերութիւն-  
ները ճշդող սկզբունքներուն եւ օրէնքներուն  
հաւաքածոն է: Պատմութիւնը մեզի կ'աւանդէ  
թէ Հոովմայեցիք իրենց տէրութեանէն զատ ու-  
րիշ տէրութիւններու գոյութիւնը եւ անոնց ան-  
կախօրէն ապրելու իրաւունքը չէին ճանչնար:  
Շատ շատ Հոովմէական մականին տակ ապրող  
վասալներ կրնային նկատուիլ անոնք:

Միջազգային օրէնքի տեսակէտով աշխարհի  
պատմութիւնը հինգ շրջանի կը բաժնուի: Ա-  
հին ժամանակներէ մինչև Արեւմտեան Հոովմի  
կայսրութեան անկումը: Այս ժամանակամիջո-  
ցին մէջ միջազգային օրէնքի հետք չկայ: Բ.  
Հոովմէական կայսրութեան անկումէն մինչև  
Վէսթֆալիայի դաշնագրութիւնը յամի Տեառն

1648: Գ. Վէսթֆալիայի դաշնագրութեանէն մին-  
չև Ֆրանսական յեղափոխութիւնը, 1648-1780:  
Դ. Ֆրանսական յեղափոխութեանէն մինչև Վի-  
էննայի 1815ի Վեհաժողովը: Ե. Վիէննայի Վե-  
հաժողովէն մինչև մեր օրերը: Միջազգային  
օրէնքը ծագում կ'առնէ իրապէս 1648ի Վէսթ-  
ֆալիայի դաշնագրութիւնէն: Պատմութեան մէջ  
անուանի է այս թուականը, եւ միջազգային  
օրէնքի տեսարաններ գովեստով կը յիշատակեն  
զայն: Երեսնամեայ կրօնական արիւնոտուշտ պա-  
տերազմէն վերջ Գերման Կաթոլիկ փոքրիկ տէ-  
րութիւնները եւ Կաթոլիկ Եկեղեցին ճանչցան  
Բողոքական Եկեղեցիին գոյութիւնը եւ Բողո-  
քական փոքրիկ տէրութիւններու իրաւունք-  
ները, եւ հաշտութեան բանակցութիւններ կա-  
տարեցին անոնց հետ:

Յորչափ պետութեան արդի գաղափարը  
գետ գոյութիւն չունէր, եւ երկիրներ ու ժողո-  
վուրդներ թագաւորներու եւ կայսրերու սեփա-  
կանութիւնն ու ստացուածքը կը նկատուէին,  
ինքնակալներ ըստ հաճոյս պատերազմ կը հրա-  
տարակէին իրենց մօտակայ թագաւորներու  
հետ: Իրենց համազօր ուրիշ թագաւորներու  
գոյութեան եւ անոնց իրաւունքի տէր ըլլալուն  
չէին հանդուրժեր: Անոնց գոյութիւնը ջնջել,  
զանոնք կողոպտել, ջարդել, նուաստացնել ու  
ստրկացնել հերոսութիւն կը նկատէին: Փոխա-  
դարձ պարտականութեան ու իրաւունքի, փո-  
խադարձ զարգացման եւ բարեք գրաջնու-  
թեան գիտակցութիւն չկար: Սակայն աստիճա-  
նաբար փոխուեցան տէրութեան ըմբռնումը եւ  
կառավարական գրութիւնները: Իւրաքանչիւր  
տէրութիւն, սոսկական անհատի մը պէս, ապ-  
րելու եւ զարգանալու իրաւունք ունի: Տէ-  
րութիւններու համար անկարելի է բոլորովին  
կղզիացած ապրիլ: Անհատներու պէս անոնք  
ալ ունին փոխադարձ պարտականութիւններ եւ  
իրաւունքներ: Տէրութիւններ ալ համայնք մը կը  
կազմեն, սահմանային, երկրային, տնտեսական  
եւ առեւտրական, յեղային ու մտաւորական  
կապերով շղթայուած իրարու: Շահերու եւ  
պէսպէս յարաբերութիւններու բերմամբ բնա-  
կանաբար բախումներ տեղի կ'ունենան: Այս-  
պիսի պարագաներու մէջ կարելի չէ սոսկ սուրի  
գործածութեամբ ու բիրտ ուժով լուծել խըն-  
դիրները, այլ պէտք է որ կարգ մը օրէնքներ  
եւ սկզբունքներ մշտեղ գան, որպէս զի հնար

ըլլայ իրաւական եւ իրերահասկցողութեան գեանի վրայ կարգաւորել գոյութիւն ունեցող անհամաձայնութիւնները :

Ահա այս տեսական գաղափարներ ոյժ տուին միջազգային օրէնքի կազմութեան : Բայց հակառակ մտածողներ եւս պահաս չեն : Կան ոմանք որ միջազգային օրէնքի մը գոյութիւնը կ'ուրանան, եւ կ'առարկեն թէ իւրաքանչիւր տէրութիւն ազատ է գործելու ըստ հաճոյս , եւ թէ ոչ մէկ սկզբունք կամ օրէնք կրնայ կաշկանգել անոնց բազուկները : Այսպիսիներ կը յայտարարեն թէ տէրութիւններ բնաւ չեն կրնար հանդուրժել որ իրենց գլխուն վրայ կարգ մը օրէնքներ կախուին Դամոկլեան սուրի պէս , եւ թէ միջազգային օրէնքը , եթէ գոյութիւն իսկ ունի , զայն գործադրող դատարան մը չկայ , որ իր արձակած վճիռը կարենայ ի գործ դնել տէրութիւններու վրայ : Լահէի իրաւարարական ատեանը , կ'ըսեն , անուանական դատարան մ'է եւ տէրութիւններու արժանապատութեան զպէղ խնդիրները երբեք չեն ներկայացուիր հոն : Եւ դարձեալ , կ'առարկուի թէ վերջերս տեղի ունեցող զէպքեր ցուցուցին թէ գաշնագրեր անգամ անգոր են սահմանաւորելու տէրութիւններուն զէնք գործածելու ազատութիւնը :

Բայց , իրաւամբ կը պատասխանուի թէ կարելի չէ այսպիսի առարկութիւններով միջազգային օրէնքին գոյութիւնը ուրանալ : Կը տեսնենք որ հիմա իւրաքանչիւր պատերազմիկ տէրութիւն կը ջանայ ինքզինք արգարացնել հրատարակելով թէ միջազգային օրէնքին արամադրութիւնները կը յարգէ : Ուրեմն ան գոյութիւն ունի , թէեւ ոտնահար եղած ըլլայ : Միջազգային օրէնքը կ'որոշէ տէրութիւններու գործելու ազատութիւնը , անոնց պարտականութիւններն ու իրաւունքները , դաշնագրերուն նուիրականութիւնն եւ արժէքը , ինչպէս նաեւ պատերազմին նպատակը , միջոցները , արդիւնքն եւ ազդեցութիւնը : Այս մասին կը խօսինք յաջորդ յօդուածով մը :

Բ. 9.

Անգղիոյ Ներքին գործերու նախարարը յայտարարեց թէ թշնամի երկիրներու հպատակներէն 14,500 հօգի արգելափակուած են Անգղիոյ մէջ , սակայն 20,000 հօգի դեռ ազատ կը մնան :

Մ Ա Ր Դ Ա Ղ Ի

Մարդադի անուճը , Հայկական բարբառով , կը տրուէր այժմու Խնուսի դաշտին , որ կը գրտնուի էրզրումի կուսակալութեան մէջ , եւ ընդարձակ արգասաւէտ գաւառ մ'է՝ անոր հաբաւային արեւելեան կողմը :

Մարդադի կ'իյնայ Տարօնի Մուշ , Բագրեւանդի Արաշկերտ եւ Խորձանի Քղի քաղաքներուն միջեւ : Այս դաշտը ունի չորս մասեր . բուն Խնուս , Թէքման , Շուշար եւ Կէօքսու , որոնց մէջ կան մօտաւորապէս երեք հարիւր վաթսուն գիւղեր :

Բուն Խնուս կ'իյնայ Թէքմանի եւ Տարօնի միջեւ , էրզրումէ գրեթէ 14-16 ժամ հետի եւ ըստ բաւականի հարթ գաշտագետնի մը վրայ :

Խնուս միշտ նշանաւոր եղած է իր բեղմնաւոր հողին , առատ եւ վճիտ ջուրերուն եւ կանանչարօտ մարգերուն համար : Այս դաշտին արեւմտեան կողմը կը բարձրանայ Պին Կէօլի ձիւնաբարձ լեռնաշղթայն , որուն ստորոտէն կը ըզլիսին հազարաւոր զուլալ առուակներ : Հաբաւային կողմը կը կանգնի գեղջկական բարբառով Ղամուր բերդը : Շաֆիներ իրենց համար մեծ պարծանք համարելով կը պնդեն թէ ժամանակին Արաքներու բնակավայր եղած է այս բերդը եւ Ղամուրը կը փոխեն Ղամիրի , որ Արաքերէն լեզուով աւերեալ ըսել կը թուի :

Այս լեռներուն մէջ կը գտնուի մեծ եւ անլեծածան լճակ մը , որուն վճիտ ջուրերուն մէջ կը նմարուին շարունակ տարուբերուող մեծկակ գերաններ : Գիւղացիներուն ասրազը շատ պարզ է , եւ անոնց զբաղումը զխաւորապէս երկրագործութիւնն է : Հողին արգասաւորութեան ու ժողովուրդի չարաչար աշխատութեան բերմամբ հողամշակութիւնն օրըստօրէ ծաղկեալ վիճակ մը առնել կը թուի : Բերքը առատ է , ապրուստը շատ աժան , այնպէս որ բազմանդամ ընտանիք մը չնչին ծախքով մը կրնայ իր տարեկան ապրուստը հայթայթել :

Բլւրակներն լեռնաշղթայէն 1-2 ժամ հետու է Խնուս բերդաւանը , որ գայնագանկըզ է եւ ունի բաւական կոկիկ բարձր դիրք մը : Բնակչութիւնը խառն է : Հոս կան 10-15 տուն Բողոքականներ , բնիկ Բաղէշցի , եւ կ'ըբաղին առեւտրական գործերով : Ունին յարմար ժողովատեղի մը , եւ վաղուց հետէ վայելած են

քարոզիչ-դասատուներու աշխատութիւնները : Վերջին երկու տարուան ընթացքին տեղս պաշտօնավարած է Ա. Էֆ. Մանուկենց, որ խիստ գնահատուած է եւ մեծ համակրանք ու սէր շահած, թէ՛ Բողոքական եւ թէ՛ Լուսաւորչական համայնքէն : Կան բաւական թուով Լուսաւորչականներ, որք ունին Չերմեռանդ առաջնորդ մը, Ա. Ծ. Վ. Եօթնեղբայրեան : Հայոց Միաց. Ընկերութեան ձեռք քաշելէն ի վեր կըրթական գործը տկար եղած է : Բողոքական համայնքն ունի կոկիկ վարժարան մը, որուն համար մասնաւոր նպաստ կը արուի Կարնոյ միսիոնարութեանէն ամէն տարի : Մեծ յոյս ունինք որ Ա. Ծ. Վ. Եօթնեղբայրեան նոր զարկ մը պիտի տայ Ազգ. վարժարանի կրթական վիճակին զարգացման :

Տեղէն շատ հեռու չէ Ձէվիրմէ գիւղը որ 150-200 տունէ կը բաղկանայ : Հոս կան 20-30 տուն Բողոքականներ : Պորտ ընկերութիւնն էրզրումի կուսակալութեան մէջ ամէնէն առաջ հոս հաստատած է իր կրթական գործը : Տեղւոյս բեմը երկու տարիէ ի վեր անպաշտօնեայ մնացած էր, կրթական գործն ալ բոլորովին լքեալ վիճակի մէջ : Տէրոջ ողորմութեամբ հիմա գործը վերսկսած է, եւ յոյս ունինք որ քիչ ժամանակէն տեղացւոց մէջ պիտի արժարժի Գրիստոնէութեան հաւատքը եւ ուսման սէրը :

Անցնինք խօսիլ Հէրամիլի մասին, որ մեր ծննդավայրն է : Հէրամիլ շնորհիւ Կարնոյ Ամերիկեան վարժարանին՝ այս մէկ երկու տարուան մէջ քայլեր առած է դէպ յառաջացում : Հէրամիլ կը բաղկանայ 250-300 տունէ, մեծ մասամբ Բողոքական : Հոս կը պաշտօնավարէ Վ. Թ. Դուկասեան : Հոգեւոր եւ կրթական գործերու վիճակը յար եւ նման է Ձէվիրմէի մէջ տիրող կացութեան : Բարեբաղդութիւնն այն է որ տղայք Կարնոյ Ամերիկեան վարժարանը կը դիմեն զարգանալու համար : Ազգայիններ վաղուց ունեցած են իրենց կոկիկ վարժարանը :

Հէրամիլի հիւսիսային կողմը Սրմանց լեռնաշղթային ստորոտը կը գտնուի 90-100 տունէ բաղկացեալ Խոզլու գիւղը : Հոս 8-10 տուն Բողոքական կայ : Ասոնք ալ ունեցան ժամանակին իրենց յատուկ վարժարանը : Այժմ հոն կը պաշտօնավարէ Մ. Միրազենց, որ սիրուած է տեղացիներէն :

Ձէվիրմէ

Մ. Մ. ԳԵՈՐԳԵՆՑ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Ի տես դրամական այն մեծ զոհողութիւններուն, զորս ներկայ պարագաներուն տակ ստիպուած ենք ընել Աւեսաբերը ծաւալով ու պարունակութեամբ իր սովորական դիրքին մէջ պահելու համար, վստահ ենք թէ իսկոյն պիտի հասկցուի հետեւեալ ազգին կարեւորութիւնը եւ թէ մեր բարեկամները իրենց ինկած բաժինը հաւատարմօրէն պիտի կատարեն ի նպաստ թերթին :

Յառաջիկայ Յունուար 1է սկսեալ Աւեսաբեր պիտի զրկուի այնպիսիներու միայն որոնք նախապէս նորոգած են իրենց բաժանորդագրութիւնը կամ թերթ ապսպրած են 1915ի համար : Տարեկան բաժնեդինն է 40 դահեկան, կամ 10 ֆրանք, կամ 2 տուար :

Վեցամսեայ բաժանորդագրութիւն ալ կ'ընդունուի, 20 դահեկան, 5 ֆրանք, 1 տուար :



### ԼՈՒՐԵՐ

#### ՀԱՍԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍ

Վիկնևա (պաշտօնական), Նոյ. 18. Ձինակիցներու գործողութիւնները Ռուսական Բոլոնիոյ Ռուս գլխաւոր ոյժերն հարկադրեցին կըռուիլ բովանդակ ճակտին վրայ մեզի նպաստաւոր պայմաններու մէջ : Կոռուի մեր համախումբումներէն մին երէկ 3,000է աւելի գերի բռնեց : Ի տես այս մեծ կոիւներուն, Ռուս ոյժերու դէպի Կարպաթեաններն արշաւումը երկրորդական կարեւորութիւն ունի միայն : Կռիպովէ ելլող Ռուս հեծեալներու ստուար ջուկատ մը ցիրուցան եղաւ մեր հրետանիին յանկարծական կրակին տակ : Հարաւարեւելեան ռազմադաշտին վրայ քանի մը կարեւոր կռիւներ եղան : Քոլուպարայի անցքերը, որ թշնամիին կողմէ քանդուած էին, նորոգուեցան եւ հիմա մեր զինուորները դետին միւս եզրը կը գտնուին : Ամսոյս 16ին 1,400 գերի եւ բազում ռազմանիւթ առինք :

Պերլին (Վոլֆ), 19. Ընդհ. սպայակոյտը

կը ծանուցանէ թէ կացութիւնն անփոփոխ կը մնայ Արեւմտեան Ֆրանտրայի և Հիւսիսային Ֆրանսայի մէջ, Գերման օգաչուններու տորմիդ մը խուզարկութեան թռիչքի մը պահուն պատերազմական երկու թշնամի օդանաւ գետին իջնել հարկադրեց: Անոնցմէ մին ինկաւ: Մեր ալ օդանաւերէն մին կը պակսի: Արկանի անտառին արեւմտեան եզրը Աէրվանի մարզին մէջ Ֆրանս, յարձակում մը ետ մղուեցաւ: Թշնամիին կորուստը մեծ է, իսկ մերը անկարեւոր: Արեւել, ռազմադաշտի նոր կռիւները կը շարունակեն: — Կ.պոլիս (Աւստրեան դեսպանատուն). Ռուսական Բոլոնիոյ մէջ ճակատամարտը կը շարունակէ նպաստաւոր պայմաններու մէջ: Մինչեւ ցարդ հասած լուրերու համաձայն մեր ձեռք ինկած են 7,000 զօր, 18 խորտընկէց եւ ռազմաթիւ թնդանօթ: — Պերլին (Վոլֆ). Ամսոյ 17ին Պալթիկի մեր նաւատորմը Լիպաւի նաւահանգստին մուտքը խցկց ընկղմեալ նաւերով եւ ռմբակոծեց անոր զինհաստատութիւնները: Մեր ծովաւազակիքները ներքին նաւահանգիստը մտնելով ստուգեցին թէ թշնամի մարտանաւ չգտնուիր հոն:

Վիեկնա (պաշտօնական), 20. Մասնակի կռիւներ եղան հարաւային ռազմադաշտին ամբողջ ճակատին վրայ: Լազարէվաչի մօտ ամբարցեալ թշնամի դիրքին վրայ մեր յարձակումը նպաստաւոր ընթացքի մէջ է: Երէկ Սերպ 7 սպայ եւ 660 զինուոր գերի վարեցինք: Օզը գէշ է: Բարձունքները մէկ մեթր ձիւնով ծածկուած են: Դաշտերը ողողուած են: — (Նոյն). Ռուսական Բոլոնիոյ մէջ Աւստրեալերման զօրքերը երէկ ամէն տեղ յաջողութիւն ունեցան: Փրզէմիլի առջեւ թշնամին փորձեց յառաջանալ ամբողջին հարաւային ճակատին եւ մեր պաշտպանողական կարեւոր ոյժերուն մօտ, բայց անմիջապէս ետ մղուեցաւ՝ ծանր կորուստ կրելով: — Պերլին (Վոլֆ). Ընդհ. բանակետէն կը հեռազրուի թէ Արեւմտեան Ֆրանտրայի մէջ եւ Ֆրանսայի հիւսիսակողմը փոփոխութիւն մը չկայ, նմանապէս Արեւելեան Բրուսիոյ կողմը: Լիճերու մարզին մէջ Ռուսերը զբաւեցին դաշտային դիրք մը, նաեւ հոն գտնուող քանի մը հին թնդանօթներ, զորս կարելի չէր շարժել: Մլավայէ եւ Լիվնօէ անդին նահանջող թշնամին կը շարունակէ իր նահանջը: Փոսքի հարաւակողմը մեր յարձակողականը կը յառա-

ջանայ: — Լոնտոն. Երեսփ. Ժողովին մէջ հարցման մը պատասխանուեցաւ թէ թշնամութիւններուն սկիզբէն ի վեր Անգլ. նաւատորմին կորուստն եղաւ մեծեալ սպայ 222, վիրաւոր 37 եւ անյայտ 5, իսկ մեծեալ զինուոր 3,455, վիրաւոր 428 եւ անյայտ 1: Այս հաշուին մէջ չեն ծովային կիսարածէն մը անյայտացածները (1,000) եւ Կոս Հոլիի նաւազները (275): Իսկ Լորտ Նիւթրին գումարման մը մէջ յայտարարեց թէ Անգլիոյ կորուստը, որ ըստ Մր. Էսքուիթի 57,000 էր Հոկ. 31ին, 80,000ի կը հասնի:

Պերլին (Վոլֆ), 21. Ընդհ. սպայակոյտը կը ծանուցանէ թէ արեւմտեան ռազմադաշտին վրայ փոփոխութիւն չկայ ընաւ: Գրեթէ ամբողջ ճակատին վրայ թշնամին մեծ զործունէութիւն ցոյց տուաւ իր հրետանիով: Արեւելեան ռազմադաշտին վրայ Աւստրեալերման յաղթական արշաւները կը շարունակեն: Կացութիւնը դերազանցօրէն նպաստաւոր է անոնց: Ռուսերը յարձակում կրեցին երեք կողմէ միանգամայն: Սոլտաուէի եւ Լիվնօի հիւսիսակողմը պարտուեցան: Գերման բանակները շարունակելով իրենց շարժումները, որոնց նպատակն է Ռուսերը գէպ իրենց կեղրոնը մղել, պիտի կտրեն թշնամին նահանջը: Հարաւակողմը Յէնսթոչաուէի մօտ զինակիցները թշնամին վանելով տեղ կը շահին: Կեղրոնը, Լոծի չրձակաները, կռիւ մը տեղի ունեցաւ, ուր Գերմանները կը յառաջանան: Հոկայ այս կռիւը որ կը շարունակուի Աւստրեալերման բանակին նպաստաւոր կերպով՝ վճռական պիտի ըլլայ: — Վիեկնա (Պաշտօնական). Ռուսական Բոլոնիոյ Ռուս գլխաւոր ոյժերուն գէմ զինակիցներու յարձակումները կը յառաջանան ամբողջ ճակատին վրայ: Յէնսթոչաուէի հիւսիսարեւելեան կռիւներուն մէջ թշնամի երկու վաշտեր անձնատուր եղան: — Պերլին. Արձէնթիին Գերմանները եւ Գերմանասէրները արդէն ծանուցուած 375,000 մարքի պատերազմական նուէրէն զատ 375,000 եւս զրկեցին պատերազմէն վնասուողներու համար: — Փարիզ. Բէնզի շուրջ եւ Ալգասի մէջ ընդհարում մը տեղի կ'ունենայ, որու վրայ չկայ մանրամասնութիւն: Փեթրոկրատէ կը հաղորդուի թէ Պելճիոյ ընդհարումներուն մասնակցող Գերման զինուորները Ալգաս պիտի զրկուին:

Պերլին (Վոլֆ), 22. Ընդհ. սպայակոյտը կը ծանուցանէ թէ արեւմտեան ռազմադաշտին

վրայ փոփոխութիւն մը չկայ : Ռուսական Բոլոնիոյ մէջ դեռ պայքար տեղի կ'ունենայ յաղթանակի համար : Փլուքի հարաւակողմը Լոնի շրջանին մէջ ու Յէնսթոչաուրի մօտ կոխը կը շարունակէ : — Վիլհելմ (պաշտօնական) . Ձիւնակիցները կորովի ու յաջող կերպով կը շարունակեն իրենց յարձակողականը Ռուսական Բոլոնիոյ մէջ : Կոռույ ճակատին մեր հարաւային թեւը Յէրէնիավայի շրջանն հասաւ : Թշնամի քանի մը հակայարձակումներ ետ մղուեցան : Վերջին կոխներուն մէջ մեր զօրքերը 15,000 Ռուս զերի վարեցին : Դեռ վճռական արգիւնք մը չկայ : Տունայէցի արեւմտակողմը եւ Կարպաթեաններու մէջ ալ կարեւոր կոխներ կը մղուին : Հարաւային ռազմադաշտին վրայ Աւստրեան կարեւոր ոյժեր անցան Գոլուպարան : Սակայն թշնամին տակաւին կը դիմադրէ լաւ ընտրուած եւ ամբողջալ կիրքերու մէջ : Մեր յառաջխաղացութիւնն յապաղեցաւ , բայց չկատեցաւ , հողին թացութեան եւ գետակներու յորդման , լեռներու մէջ ալ ձիւնի մեթրաչափ բարձրութեան պատճառով : Մեր հետազօտիչները վերջին երկու օրերուն մէջ 2,440 գերի ալ բռնեցին : Ամսոյս 6չն ի վեր բռնուածներուն զուճարը 13,000ի կը հասնի : — Շքուրկարս . Յրիարիխահովէն իջնող Անգլիացի օդաչուն (նաւային տեղակալ մը) ծանրապէս վնասուած է գլխէն ու ձեռքէն : Չհաստատուիր թէ երջրորդ օդաչուն Գոնսթանցայի լճին մէջ խեղդուած է : Ընդհակառակն կ'իմացուի թէ սուժը մը արձակած է Մանգէլի վրայ , բայց չէ վնասած : Յրիարիխահովէնի ղեկավար օդանաւերուն կայանները բոլորովին անվնաս կը մնան : — Պերլին . Գաղթային վարչութիւնը յիշատակագրով մը կը յայտարարէ թէ Արեւել . Ափրիկէի մէջ կացութիւնը շատ նպաստաւոր է Գերման զօրաց : Անգլիացիները մեծ կորուստ կրած են : Բամբերունի մէջ Անգլիացիներն ու Յրանսացիները գաղթավայրին ծովեզրը միայն գրաւած են : Թոկօ անձնատուր եղած է Օգոս . 27ին : Հարաւարեւմտեան Գերման Ափրիկէի մէջ Լուտէրիցի Ծոցը միայն անցած է Անգլիացիներուն ձեռք : Գերմաններն առատ ռազմանիւթ ունին : Իսկ Ովկիանիոյ Գերման գաղութները Անգլիացիներէ եւ Ճափոնցիներէ գրաւուած են :

Պերլին (Վոլֆ) , 23 . Ընդհ . սպայակոյտը կը ծանուցանէ թէ Նիէօփոսի եւ Իբոի մօտ

կոխները կը շարունակեն : Անգլ . նաւաբաժինը որ երկու անգամ մօտեցաւ ծովեզրին՝ մեր հրետանիով վանուեցաւ : Անգլ . նաւային հրետանին արգիւնք մը չունեցաւ : Արկոնի անտառին մէջ քայլ առ քայլ կը յառաջանանք : Խրամ խրամի ետեւէ կը խլենք Յրանսացիներէն : Ամէն օր գերի կը բռնենք : Մողէլի արեւելակողմը մեր դիրքերուն դէմ բուռն հետազօտութիւն մը ի դերեւ հանուեցաւ մեր հակայարձակումով : Արեւել . Բրուսիոյ մէջ կացութիւնն անփոփոխ է : Գայով Բոլոնիոյ , ճակատամարտին ելքը յապաղեցաւ Վարչաւայի կողմէ Ռուս նոր ոյժերու ժամանման պատճառով : Յէնսթոչաուրի արեւելեան շրջանին մէջ եւ Բրաքովի հիւսիսարեւելակողմը կը շարունակուին Աւստրեւզերման յարձակումները : — Վիլհելմ (պաշտօնական) . Ռուսական Բոլոնիոյ մէջ վճռական արգիւնք մը չկայ դեռ : Ձիւնակիցներն իրենց յարձակումը կը շարունակեն Յէնսթոչաուրի արեւելեան եւ Բրաքովի հիւսիսարեւելեան կողմը : Երէկ գրաւեցինք Փիլիքա գիւղը եւ 2,400 Ռուս զերի առինք : Ստորին Տունայէցի միւս կողմը արշաւել փորձող Ռուսերը չյաջողեցան իրենց ձեռնարկին մէջ : Ռազմավարական նպատակներով Կարպաթեան քանի մը կիրճեր թշնամիին թողուցինք առժամապէս : Փրզէմլի պաշտպանները 20ին զուրս խուժեցին եւ բերդաքաղաքին արեւելեան ու հարաւարեւելեան ճակատէն հեռու վտարեցին պաշարողները : Թշնամին հիմա թնականութիւնու հատողութեան սահմանէն զուրս կը գտնուի : — Փարիզ . Գոնսթանցա լճին վրայ մղուած օդանաւամարտին ականատեսները կը պատմեն թէ Անգլ . օդանաւերը Յէփրին մը տապալեցին , ուր մեքենավար մը եւ 2 սպայ գտնուեցան անխափած վիճակի մէջ : — Պերլին . Աւստրեան ընդհ . սպայակոյտի պետ Զօր . Հէօցէնտորֆ թերթի մը հարցման պատասխանեց թէ Աւստրեւզերման հրամանատարներու միջեւ անհամաձայնութեան մը գոյութեան զրոյցները բացարձակ յերկրանք են :

Պերլին (Վոլֆ) , 24 . Մեծ սպայակոյտը կը հեռագրէ թէ Անգլ . մարտանաւերը երէկ ալ երեւցած են Յրանարայի ծովեզրը եւ ռմբակոծած ղԼժմպարցիա եւ Զէպրուկէ : Մեր զօրքերը թեթեւ կորուստ ունեցան , բայց բաւական ընակիչներ կան սպաննուած ու վիրաւորուած :

Արեւմտեան սաղմադաշտին վրայ էական փոփոխութիւն մը չկայ, արեւելեանին ալ կացութիւնը դեռ անորոշ կը մնայ: Արեւել. Բրուսիոյ մէջ մեր զօրքերն իրենց դիրքերը կը պահեն սարահարթերու վրայ: Հիւսիս. Բոլոնիոյ մէջ ուժգին կռիւներ կը մղուին, բայց դեռ առանց որոշելի: Հարաւ. Բոլոնիոյ մէջ Յէնսթոչաուի կողմերը եւ Վարչաւայի հիւսիսակողմը գտնուող մեր հարաւային թեւին վրայ կը յառաջանայ մեր յարձակողականը: Բացարձակ սուտ է Ռուսական սալուրը թէ Ֆոն Լիպէրթ եւ Ֆոն Փանէլիզ զօրավարները Ռուսերու ձեռք գերի ինկած են Արեւել. Բրուսիոյ մէջ: Առաջինը կը գտնուի Պերլին, իսկ երկրորդը իր զօրաց զուխը: Երկար ժամանակէ ի վեր երկուքն ալ բացակայ են Արեւել. Բրուսիայէ: — (Նոյն). Անգղ. ծովագետութեան 23 թուակիր զեկոյցին համեմատ Գերման Մ 18 ընդծովեան Անգղ. պահականաւէ մը ընկղմած է Սկովտիոյ հիւսիսակողմը: Բեռլինը գործակալութիւնը կը յարէ թէ Անգղ. Կերի թնդանօթակրահալածը 3 սպայ եւ 23 նաւազ պատած է նոյն ընդծովայէն: Նաւազ մը խեղդուած է: — Վիեկնա (պաշտօնական). Ռուսական Բոլոնիոյ մէջ կռիւները կը շարունակեն յոյժ ցուրտ օդով: Թշնամի շատ յեղեղեղներ գրաւեցինք և յառաջացանք Վոլպրոմի ուղղութեամբ եւ Փիլիքա գիւղին երկու կողմը: Դարձեալ գերի բռնեցինք: Ռազմադաշտին միւս մասերուն վրայ փոփոխութիւն չկայ: Գերիներու համագումարն այժմ կը հասնի 110,000ի, որու 1,000ը սպայ:

Ն Ե Ր Ք Ի Ն

Օսմ. Ընդհ. Բանակէտի Զեկոյցներ. Նոյ. 19. Օսմ. բանակը երկու օրէ ի վեր կը յարձակի Ռուսականին վրայ, որ հաստատուած էր սահմանագլխին մօտ Ազապի, Զանդապի եւ Սոչապի մէջ: Մեր զինուորները սուլիսուր յարձակումով առին Ազապի շրջանին բարձունքները, որոնք ուժեղապէս ամրացուած էին թշնամիէն: Կռիւրը կը շարունակէ սաստիկ բայց մեզի շատ նպաստաւոր կերպով: Դէպի Պաթում արշաւող մեր ջոկատները, երկրորդ ծանր պարտութեան մը մատնելէ ետեւ Ռուսերը, զրաւեցին

Չալոթլար եւ Բորա դիրքերը: Չալոթլարի մէջ գրաւեցինք Ռուս զօրք մը, 4 թնդանօթ, 1 ինքնաշարժ, բազմաթիւ ձիեր եւ մեծաքանակ պաշար, եւ գերի վարեցինք 6 սպայ, որոնց մին դեր գնդապետ է եւ մին խաղախներու հարկուրապետ, նաեւ աւելի քան 100 զինուոր: Ռուսերը մեծ կորուստ կրեցին, փախողներն ալ անկարգօրէն փախան դէպի Պաթում, Ամսոյս 16ին Սալմաստի կողմին մէջ Ռուս զօրեղ ջոկատ մը յաղթուեցաւ մեր արշաւախմբէն եւ փախուստ տուաւ՝ մեռեալ թողլով 2 սպայ եւ 100 զինուոր: Մինչեւ հիմա Ռուսերու ծառայութեան մէջ գտնուող Պարսիկ ցեղապետներ իրենց ժողովրդով միացան մեր զօրքերուն: — Հինգ զրահաւորէ եւ 2 յածանաւէ բաղկացեալ Ռուս նաւատորմը մօր նաւատորմին հետապնդութեան տակ ապաստանեցաւ ի Սեւասթոփոլ: Ծովառմբակիբերու տորմդիկը Ռուս նաւահանգիստ մը փախաւ: — Նոյ. 20. Ամսոյս 17ին մեր զօրքերը սուլիսուր յարձակումով առին Արզուլինի շրջակայ բոլոր Ռուս զիրքերը: Թշնամին փախաւ կողոյ դաշտին վրայ թողլով բազմաթիւ մեռեալ, ամբողջիւններու մեծաքանակ առաղձ եւ ռազմանիւթ: Կովկասի սահմանագլխին շրջակաները կռիւր կը շարունակուի Ռուս բանակին հետ: Բուռն կռուէ մը ետեւ մեր զօրքերն յաղթեցին Ռուս սահմանին մէջ ի Լիման գետնուող թշնամիին, որ ծանր կորուստ կրեց եւ ճորտիս գեաէն անդին փախաւ: — Նոյ. 21. Երկէ Հաւիճիյէ յածանաւը ռմբակոծեց եւ կործանեց Փոթիի եւ Նովորոսիսքի միջեւ Թօփսէի քարիւղի Ռուս մթերանոցներն ու անթիւ հեռագրութեան կայանը, Ամսոյս 18ին Շաթ էլ Արապի մէջ 9 ժամու բուռն կռիւ մը մղուեցաւ Անգղիացիներու հետ, որոնք ծանր կորուստ կրեցին: Գերի բռնուած Անգղիացիները կ'ըսեն թէ Անգղ. զօրաց հրամանատարը վիրաւորներուն մէջ կը գտնուի: Մեր Մարտարիս թնդանօթակրին մէկ ռումբը Անգղ. թնդանօթակրի մը վրայ ինկաւ եւ պայթում յառաջ բերաւ: Մանրամասնութիւնները դեռ ծանօթ չեն: — Նոյ. 22. Պաթումի ուղղութեամբ գործող մեր ոյժերը ճորտիս ամբողջովին ետ մղեցին Ռուս զօրքերը: Այդ շրջանը կը գտնուի այժմ մեր զինուորական զրաւման տակ: Արզուլինի ուղղութեամբ յառաջացող մեր զօրքերը գրաւեցին այդ դիրքը: Շաթ էլ Արապի կողմին մէջ Անգղիացիներու



կորուսան եղած է 750 մեռեալ եւ 1,000 վիրաւոր: Մուրատ գետի հովտին մէջ յառաջանալ ուզող Ռուսները յարձակում կրելով փախան՝ ծանր կորուստի ենթարկուելով: Դաշտային երեք թնդանօթ զրաւեցինք անոնցմէ: Օսմ. զինուորները Սուէզի ջրանցը հասան: Զրանցէն դէպ արեւելք 30 հզմթ. հեռու Գալթագա Գարթապայի եւ Գանթարա գիւղին միջեւ մղուած կռիւին մէջ Ուլիւրն հարիւրապետը, տեղակալ մը եւ բազմաթիւ Անգլիացի զինուորներ սպանուեցան: Շատ գերի բռնեցինք: Վերաւորնեւրուն թիւը մեծ է: Անգլիացի զինուորները անկարգօրէն ետ քաշուեցան: Անգլիացիներու յառաջապահներուն մէջ զանուող Մէհարիսթները մեղի անձնատուր եղան, ինչպէս մինչեւ հիմա եղան նաեւ Անգլ. կառավարութեան ծառայութեան մէջ գանուող օտարկանները:—Նոյ. 23. Նշանակելի փոփոխութիւն մը չկայ զանազան ռազմադաշտերուն վրայ: — Նոյ. 24. Պարսիկ կողմը Նոյ. 19ի կռուէն ետեւ, ուր Անգլիացիները ծանր կորուստ կրեցին, վերջինները օգնական ոյժ ստանալով յամրաբար յառաջացան իրենց թնդանօթակիրներուն պաշտպանութեան տակ: Օսմ. զօրքերն անոնց կ'սպասեն նոր դիրքի մը մէջ, ուր պիտի չկրնան իրենց նաւերուն թնդանօթներով պաշտպանուիլ: Նիշուֆէր շոգինաւն արկածով ընկղմեցաւ Քիլիսայի (Շիլէ) բացերը: Նոր ոչ մէկ տեղեկութիւն ստացանք թշնամութիւններու միւս թատրերէն: Նիշուֆէր 209 տկոչփ. տարողութիւն ունէր եւ իբրեւ ականադիր կը ծառայէր: Ընկղմեցաւ զարնուելով ականի մը, որ Պուլկար նաւահանգիստէ մը բաժնուելով՝ ալիքներէն քշուած էր յիշեալ վայրը: — Նոյ. 25. Կովկասի սահմանազլխին վրայ տիրող աննպաստ օդին պատճառով լեռնային շրջանի մէջ մեր յարձակողականը կանգ առաւ առժամապէս: Ռուսները նմանապէս իրենց դիրքերը կը պահեն սահմանազլխին վրայ: Ծորոխի մարզը մտնող Օսմ. ջոկատները նոր յաղթանակ մը տարին: Մորդուլի դիրքը գրաւելէ ետեւ Ծորոխն անցան Պորթլայի մօտերէն եւ գրաւեցին վերջինը: Այս առիթով առին թշնամիէն արագահարուած բազում թնդանօթ, հրետաձիգ 100 ձի, բաւական ռազմանիւթ, շարժուն հիւանդանոց մը ամէն կազմածով, 2 ինքնաշարժ եւ մեծաքանակ ուժանակ:

Անցեալ ուրբաթ բոլոր նախարարները կայս.

պալատ գացին Արարական տարեմուտի շնորհաւորութեան համար: Նոյն օր Սոֆիայի Օսմ. դեսպանը մայրաքաղաքս եկաւ եւ երկուշաբթի վերադարձաւ իր պաշտօնատեղին: — Պոլսոյ կուսակալ եւ քաղաքապետ ձէմիլ փաշա հրաժարեցաւ եւ իրեն յաջորդեց Աղզ. պաշտպանութեան նախագահ Ըմէթ պէյ: — Հանր. Պարտքի Վարչութեան պարտաթղթերու կարծնները, 2,150,000 ոսկի, այսուհետեւ մայրաքաղաքիս մէջ միայն պիտի վճարուին, որով այդ գումարին 25% ը պիտի վճարուի եւ մնացեալը պատերազմիկ երկիրներու վերաբերելով պիտի շահուի: Զնջուեցաւ նոյն վարչութեան սա որոշումը թէ պատերազմի պատճառով մեկնող պաշտօնեաները արձակուրդի մէջ պիտի նկատուին: — Պատերազմիկ երկիրներու վարժարաններուն փակումն ու գրաւումը անցեալ շաբթու սկսաւ եւ օտար ուսուցիչներու մեկնման պայմանաժամ տրուեցաւ: Յարզ գրաւուած են 53 Պրանս. եւ Անգլ. եւ 3 Ռուս վարժարան: Բացառութիւն համարուեցան Ալիանս Իզրայէլիթի Հրէական վարժարանները, զի միջազգային հանգամանք ունին: Հանրօգուտ շինութիւններու ընկերութիւնը, որու անդամները թշնամի երկիրներու հպատակ են, գրաւուելով Հանրօգուտ գործերու նախարարութեան յանձնուեցաւ: Տէրքոզի ջրի ընկ.եան 330 պաշտօնեաներուն 35ը արձակուեցան: Հետզհետէ կը գրաւուին ուրիշ հաստատութիւններ որոնք պատերազմիկ երկիրներու հպատակներու կը պատկանին, կամ անոնց ձեռքով կը կառավարուին:

Եւրոպական կառախումբի երթեւեկը, որ մէկ երկու օր դադրեցաւ Տէտէաղաճի փակմամբ, վերսկսած է: — Այսթէֆանօի Ռուս յիշատակարանէն ետեւ շարաթ ալ Պէյքոզի յիշատակարանը քանդուեցաւ Թուրք ուսանողներու եւ ամբոխի մը կողմէ: — Իւլլմաներու ժողով մը, որու կը մասնակցէին նաեւ նախկին Շէյխ իւլ Իսլամներ, վաւերացուց սը. պատերազմի վճիռները եւ յայտարարութիւն մը հրատարակուեցաւ, Սուլթանին հրամանով ամբողջ Իսլամ աշխարհի ուղղուած, որով կը ծանուցուի թէ «Իսլամներու Խալիֆան զանոնք սը. պատերազմի կը հրաւիրէ» Իսլամութեան թշնամի եղող Ռուս, Անգլ. եւ Պրանս. կառավարութիւններուն եւ անոնց դաշնակիցներուն դէմ, եւ կը բացատրուի միանգամայն թէ Իսլամին պարտքն է «բարուք յա-

րաբերութիւն տաձել հպատակներուն հետ այն պետութիւններուն, որոնք իրենց և Կայս. կառավարութեան միջև Կնքուած դաշնագիրները կը յարգեն և բարեկամութիւն ցոյց կու տան :» — Ոսկիի արտաձման արգելքը ծանօթ է : Պուլկարիա, Յունաստան, Սերպիա, Մանթենեկրո և Բուլմանիա դաջողներ արածուած են ունենալ ըստ կարգի 15, 10 և 5 ոսկի միայն, Եւրոպայի ուրիշ կողմեր գացողներ 20, 15 և 8, Ճափոն, Ճափա, Հնդկաստան և Ասիոյ այլ կողմեր ու Հար. Ափրիկէ, Հրւս. և Հար. Ամերիկա և Աւստրալիա գացողներ 50, 30, 15 : — Օտար երկիրներու յատուկ նամակներ Օսմ. երկիրներու վերաբերողներու նման լայն պիտի յանձնուին և նամակ թէ հեռագիր պիտի գլբուին Թուրք, Արաբ, Հայ, Յոյն, Հրեայ, Գերման, Ֆրանս., Անգլ. կամ Իտալ. լեզուներով միայն, Պաղատարի շրջանակին մէջ և հոս Պարսկերէն, Էպիրնէի շրջանակին մէջ և հոս Պուլկարիէն : Թշնամի տէրութիւններու հետ թղթատարական և հեռագրական հաղորդակցութիւնները դադարեցան ամսոյս 1915 ի վեր : — Թնդանօթարանի նախկին վերապետուչ Զէքի փաշա երկուշարթի մնաու :

Անցեալ շաշթու զին. կարգապահութիւնը ամրապնդող կարգ մը ստեղծման օրէնքներ հրատարակուեցան, այս շարթու ալ քաղաքային քանի մը օրէնքներ, որոնցմով կը ջնջուի սարուայս ելեւմտացոյցէն ընդհ. քննիչներու յատկացուած վարկը և կ'աւելցուի պաշտօնէութեան ճանապարհածախսի գլխուն վրայ, կը ներուի կէսը այնպիսիներու պատժին, որոնք բռնաբարուամէ տարբեր ոճրի կամ եղեռնագործութեան համար դատապարտուած են (այսպիսի 180 բանտարկեալներ արգէն իսկ արձակուեցան), կը ներուի նաեւ զին. այն փախըստականներուն, որոնք մինչեւ 30 օր փութան ներկայանալ ուր որ անկ է :

Աւեսարանակալ. Աղգապետարանի կողմէ ձեռնհաս իշխանութեան գիմոււմ կըաւ, որպէս զի Չմշկածագի քարողիչը զինուորագրութենէ զերծ կացուցուի և պաշտօնապէս ճանչցուի եկեղեցին : Սըվազի Մկրտական եկեղեցիին համար ալ հրովարտակ ինդրուեցաւ : — Գուճափուրի և Ենիգափուրի միջև Մուսալլա թաղի Անգլ. վարժարանը փակուեցաւ կառավարութեան կողմէ : — Փրսֆ. Թումանանի ի պատիւ տրուած

թէյասեղանին արգիւնքը (584 գահ.) Պատարհօր շօր յանձնուեցաւ Սպարթա և Պուրտուր կուկու համար :

Հայիսկալ. Պատրիարք Հայրը շարթա հաւորական այցելութիւն տուաւ Հանրօր դործերու նորընտիր նախարարին : — Ն. նապատութիւնը կաակայ հոգաբարձու յանձնարարեց մէկ տումարի մէջ արձանաբոլոր կտակները, ինչ որ սիրով ընդունուեալ — Աւետիք Դուկասեանի կտակով հիմնելի ժարանին վայր որոշուեցաւ Մուշ : — Ուսկորուրդը որոշեց աւանց քննութեան վկասական տալ Թալասի Ամերիկեան վարժաշրջանաւարաններուն, պայմանով որ կէ վկայեալ ուսուցիչներ աւանդեն Հայերէնը և գրականութեան գասերը և առաջնորանն իրաւունք ունենայ հսկողութիւն ի դնելու : — Գատական նախարարը Պատարքարան ուղղուած երկու պաշտօնագրով Պուլկարական նախարարութեան շնորհակալութիւններն հաղորդեց Աղգ. հիւանդանոց Օսմ. զօրաց յատկացուած 150 անկողինն տանայի ու Մարաշի զին. իշխանութիւնն արամադրութեան տակ դրուած 7,000 և զոյգ գուլպաներուն համար : — Տրապիզոն առաջնորդարանէն ուրբարթի թուականով հգիր մը հասաւ թէ ամբողջ ժողովուրդը ողողլ է : — Հալէպի առաջնորդ Տ. Սայեարքապկ. (45 տարեկան) կիրակի իրիկուն թողիկ ազգայիններու Պատար. Տեղապահրուեցաւ : — Հայ Իժչկ. Միութիւնը ոլ հիւանդապահութեան ձրի դասընթացք մը տտուել 15 դասախօսով և 27 դասաւանթեամբ : — Հ. Բ. Ը. Միութեան Կեդր. շութիւնը 100 Անգլ. ոսկի փութացուց րիարքարան ինպատ Տիարպէքիրի հրկիչներուն և Կարնոյ շրջակայից կարօտեալները Կպոլսոյ մասնաժողովն ալ նոյն նպատ յատկացուց 128.70 ոսկի : Որոշուած է զվտարի պահել Տէօրթ Եոլի Գէլէկեան որբա և Վանի վարժապետանոցը միայն :

مدیر مسئول — صموئيل ق. هاروتیونیان

ՏՊԱԳՐԻՉ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Յ. ՄԱՅՅԷՆՈՍԵ

Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս

ՅՍ ՏԵՍԱԻ

== ՕՉԱԿԱՆ ==

ՅՈՐ ՔԵՐԱԿԱՆ

Մինչեւ ցարդ հրատարակուած բոլոր  
արականներէն գերազանց

Մանկավարժական ուղղութեամբ պատ-  
վաստուած, առաջին անգամ կարդալ սկսող  
սնուկին հաճելի ընելու համար ընթեր-  
անութիւնը:

Ընտրելագոյն թուղթի վրայ գեղեցիկ  
պագրութիւն, ծայրէ ի ծայր զարդարուած  
դրնաւոր պատկերներով եւ գեղարուես-  
տական կողքով:

⇒ ԳԻՆ 20 ՓԱՐԱ ⇒

Յոյս եւ Գաւառի բոլոր գրավաճառներէն  
կարելի է ստանալ:

ՇԱԳՈՒՄՆ ԵՒ ԸՆԹԱՑՔ  
ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
Ի ՀԱՅՍ

Հեղինակ՝ Լ. ՍՏԵՓԱՆ Խ. ԻԻԹԻՃԵԱՆ  
անգուցեալ Վեր. Հ. Ստեփան Խ. Իւթիւ-  
այս երկատիրութիւնը, որ այս օրերս  
տեսաւ, ամէն Հայու համար խիստ շահե-  
պարունակութիւն ունեցող գիրք մ'է: Այս  
գիրքը որուն առաջին էջերուն մէջ կ'երեւի  
Ա. Կ. Շմաւոնեանի մէկ յառաջաբանը,  
ղկանայ 292 էջերէ, եւ շատ դրաւիչ եղա-  
ւոր կը պատմէ Աւետարանականութեան ծա-  
րի Հայս եւ Հայաստանեայց Աւետ. Եկե-  
ղ կազմութիւնը, եւ կը խօսի նոյն եկե-  
ղ պատմութեան վերաբերող կարեւոր կարգ  
պղբերու վրայ՝ պատմուած ակնաւատեսի մը  
ործօն դեր ունեցող անձի մը կողմանէ,  
սի էր հեղինակը:

Այս գիրքին գինն է 8 դահ. եւ կեդրոնա-  
ն է Յ. ՄԱՏԹԷՍՅԱՆ, Պայպլը Հառւս, Կ.  
Սիւ: Գաւառներու համար գինն է փոսթի  
բով 10 դահ.:

1915ի Կիրակնօրեայ դասագիրքը պիտի  
հրատարակուի այս տարուան պէս: Ջանք  
պիտի չխնայուի եռամսեայ հատորները ա-  
ւելի օգտակար եւ շահեկան ընծայելու հա-  
մար փոքրերու թէ մեծերու:

Եռամսեայ հատորները պիտի զրկուին միայն  
անոնց որոնք կ'ապագրեն եւ դրամը կանխիկ կը  
զրկեն, կամ ժամանակին հրահանգ կու տան Մր.  
Փիթի որ փոխարժէքը իրենց հաշուոյն անցուի:  
Ամէն ապագրանք հասած ըլլալու է մինչեւ  
Նոյեմբեր 15, որպէս զի գիրքերը զրկուին ժա-  
մանակին:

Գինն է 50 փարա (փոսթի ծախքով):  
Երբ 15էն 30 հատորներ մէկ հասցէի ուղղուին,  
10 առ հարիւր գեղջ պիտի ըլլայ, 31էն 100 հա-  
տորի համար 20 առ հարիւր, իսկ 100էն աւելիի  
համար 25 առ հարիւր:

Յանձնարարութիւնք պէտք է զրկուին առ  
Յ. Մատթէոսեան Պայպլը Հառւս, Կ. Պոլիս:

1915Ի ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒՆ  
ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐՆԵՐՈՒՆ

Քարտերը պիտի զրկուին ուղղներուն:  
52 քարտ պարունակող մէկ տրցակը 20  
փարա է, 10 տրցակը 3 դահեկան, կամ  
100 տրցակը 25 դահեկան: Այս դրամը  
թղթատարի ծախքին համար է միայն:

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ  
ԿԻՐԱԿԻ, ՆՈյ. 29

- ԲԵՐԱ. — Այնալը 2էշմէ. Որ. երրորդութիւն եկե-  
ղեցի. ժամ 10 (Ը. Ե.). Վեր. Ա. Պ. Շմաւոնեան:
- ԳԷՏԻԿ ՓԱՇԱ. — Ամերիկեան վարժարան. կանկայի  
եկեղեցի. ժամ 10 (Ը. Ե.). Վեր. Յ. Ա. ձեհիգեան:
- ՊԱՅՊԸԼ ՀԱՌԻՍ. — Յինճանճըլար Եղուշու. Էմմանուէլ  
եկեղեցի. ժամ 10.30 (Ը. Ե.). Վեր. Յ. Գ. Գրիգորեան:
- ՍԳԻԻՏԱՐ. — Ամերիկեան Գոլէճին մատուոք. ժամ  
10 (Ը. Ե.). Պաւ. Կ. Գերոքեան:
- ԽԱՍԳԻԻԴ. — ժամ 1.30 (Ը. Ե.). Պաւ. Բ. Պետրեան:
- ՊՅՅԱՃԸ ԳԻԻԴ. — Գարրիէլեան քնակարան. ժամ  
3 (Ը. Ե.).

# 1915 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆԻ

ԳՐՊԱՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐՆԵՐԸ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՅՈՒՇԱՏԵՏՐՆԵՐԸ

Արդէն հրատարակուած ըլլալուն՝

կը խնդրուի որ յանձնարարութիւնք փութացուին:

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, Պայպրլ-Հառու, Կ. Պալիս

## “ԱԻԵՏԱԲԵՐ

## ՄԱՆԿԱՆՑ,,Ի

ՅԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Կը ծանուցանենք թէ, նկատելով որ տարեկան 6 դահ. բաժանորդագրինով անկարելի է Առեսաբեր Մանկանցի հրատարակութեան ծախքերը գոցել, յառաջիկայ 1915 Յունվարէ սկսեալ այս ամսաթերթին տարեկան բաժանորդագրինը պիտի ըլլայ Թուրքիոյ համար 8 դահեկան, եւ ուրիշ երկիրներու համար 10 դահեկան:

Կը յուսանք թէ բաժանորդագրի վրայ եւ ղաժ այս փոքր յաւելումը արգելք պիտի չըլլայ այս թերթին յառաջիկայ տարի աւելի շատ թուով բաժանորդներ ունենալուն: Խմբագրութիւնը իր կողմանէ ջանք պիտի չխնայէ ամէն թիւի համար ապահովելու ճոխ եւ շահեկան պարունակութիւն մը, եւ կը յուսայ թէ դեռատի բաժանորդներն ալ ամէն ձիգ պիտի ընեն իրենց շրջանակներէն նոր բաժանորդներ գտնելու յառաջիկայ տարուան համար:

ԽՄԲ. «ԱԻԵՏ. ՄԱՆԿ.»Ի

## ԹԵՅ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Թ Է Յ



Թ Է

Թ Է Յ

Թ Է

Թ Է Յ

Թ Է

ՀՈՏԱԻԷՏ, ԻՆԱՅՈՂԱԿԱՆ ԵՒ ՍՆԵԴԱՐԱՐ

Փնտոնցէք սոյն «Փիղ» մարքայով թէյի Թուրքիոյ բոլոր քաղաքներու թէյաւաճառն մուն ջով: Կեդրոնատեղի Պահճէ Դարու, Ստորգիէ խանին անկիւնը

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ, ՈՐԴԻ ԵՒ ԸՆԿ.

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն Ը

ՏՈՐԹ. Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆԻ ԿՈՂՄԷ ԿՐԻՍՏՈՆԷՍԿԱՆ ԲՈՂՈՐՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԸԶՂԱՊԱՇՆԵՐՈՒ ԱՂԱՆԴԻՆ վրայ Առեսաբերի մը հրատարակուած շահեկան յօդուածաշարքը գլխաւոր յոյսով ալ հրատարակուեցաւ եւ կը ծախուի 6. Մատթէոսեան դրատան մէջ ի Պայպրլ Հառու: Գին 3 դահեկան:

Մեր յարգելի բաժանորդներուն կը յիշեցուցնենք քե հասցէի փոփոխութեան համար երկու դահեկանի դրուանքը դիւրեւ աճհրամսես է:

ԱԻԵՏԱԲԵՐ ձեռքէ կը ծախուի հատը 40 փարայի